ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

YEREVAN STATE UNIVERSITY

FOREIGN LANGUAGES
FOR SPECIAL PURPOSES

№ 5 (14)

YEREVAN STATE UNIVERSITY PRESS
YEREVAN 2017

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԸ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ

ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

№ 5 (14)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2017

Recommended by the Scientific Council of the Department of Romance and Germanic Philology, Yerevan State University, Republic of Armenia

Editor-in-Chief: **Margarita Apresyan**
Head of ESP Chair N 1, PhD in Linguistics, professor, YSU, RA

Honourable members of the editorial board: **Dora Sakayan**
Doctor of Philology, professor, McGill University, Canada
Svetlana Ter-Minasova
Doctor of Philology, professor of Moscow State University, Dean of the Faculty of Foreign Languages,
Hans Sauer
Doctor of Philology, Institute of English Philology, Munich University, Germany
Charles Hall
PhD, associate professor of Applied Linguistics, University of Memphis, USA

Editorial board: **Samvel Abrahamyan**
Dean of the Department of Romance and Germanic Philology, PhD in History, associate professor, YSU, RA
Jura Gabrielyan
Doctor of Philology, professor
Head of German Philology Chair, YSU, RA
Karo Karapetyan
PhD in Pedagogics, professor, YSU, RA
Albert Makaryan
Doctor of Philology, professor, YSU, RA
Yelena Mkhitarian
Head of German Languages Chair, PhD, professor, ASPU, RA,
Hasmik Bagdasaryan
Head of Romance Philology Chair, PhD, associate professor

Foreign Languages for Special Purposes, Yerevan, Yerevan State University Press, 2017, p. 134.

FLSP international journal, published once a year, is a collection of scientific articles presented by FLSP practitioners inside and out Armenia targeting at professional experience exchange and concurrent development of FLSP methodologies.
Letters and articles for publishing should be sent to the editor-in-chief
E-mail: english@ysu.am, margaret.apresyan@mail.ru

© Apresyan, M. and others, 2017
© YSU press, 2017

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի
գիտական խորհուրդը

Գլխավոր խմբագիր՝ **Մարգարիտա Ապրեսյան**
ԵՊՀ անգլերեն լեզվի թիվ 1 ամբիոնի վարիչ, բան. գիտ. թեկն., պրոֆեսոր

Խմբագրական խորհրդի պատվավոր անդամներ՝
Դորա Սաքայան
բան. գիտ. դոկտ., պրոֆեսոր
Մքգիլ համալսարան, Մոնրեալ, Կանադա
Սվետլանա Տեր-Մինասովա
Բան. գիտ. դոկտ.,
Մոսկվայի պետական համալսարանի պրոֆեսոր,
Օտար լեզուների ֆակուլտետի դեկան,
Հանս Սաուեր
Բան. գիտ. դոկտ., պրոֆեսոր
Անգլիական բանասիրության ինստիտուտ, Մյունխենի համալսարան
Չարլզ Հոուլ
բ.գ.թ., կրտսեր պրոֆեսոր, Մեմֆիսի համալսարան, ԱՄՆ

Խմբագրակազմ՝
Սամվել Աբրահամյան
ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի դեկան, պատմ. գիտ. թեկն., դոցենտ
Յուրա Գաբրիելյան
ԵՊՀ գերմանական բանասիրության ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆեսոր
Կարո Կարապետյան
մանկ. գիտ. թեկն., պրոֆեսոր
Ալբերտ Մակարյան
բ.գ.դ., պրոֆեսոր, ԵՊՀ
Ելենա Մխիթարյան
ՀՊՄՀ գերմանական լեզուների ամբիոնի վարիչ, բան. գիտ. թեկն., պրոֆեսոր
Հասմիկ Բաղդասարյան
Ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ

Օտար լեզուները մասնագիտական նպատակների համար, Եր., ԵՊՀ հրատ., 2017, 134 էջ:

Գիտական հոդվածների միջազգային ամսագիրը նպատակ ունի հավաքելու և ներկայացնելու Հայաստանի և Հայաստանից դուրս «Օտար լեզուները մասնագիտական նպատակների համար» (FLSP) ոլորտի մասնագետների կողմից մշակած ժամանակակից մեթոդները՝ փորձի փոխանակման և դրանց հետագա զարգացման նպատակով:

© Ապրեսյան Մ. և ուրիշ., 2017
© ԵՊՀ հրատ., 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
CONTENTS

Այվազյան Ա.
ԼԵԶՎԱՈՃԱԿԱՆ ՀՆԱՐՔՆԵՐԻ ԴԵՐԸ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԼԵԶՎՈՒՄ 8

Ապրեսյան Մ., Վանոյան Լ.
ԳԻՏԱԿԱՆ ՏԵՔՍՏԻ ԺԱՆՐԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ..... 21

Բաղդասարյան Հ.
ԼԵԶՎԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՐՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ 35

Բեքարյան Ն.
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՏԵՔՍՏԻ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆԳԼԵՐԵՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ 44

Aghajanyan N.
CONCEPTUAL METAPHORS IN THEORY AND PRACTICE IN TEACHING ESP TO FUTURE PSYCHOLOGISTS 56

Beschikjan T.
GRAMMATIK IM FREMDSPRACHENUNTERRICHT.....63

Karapetyan R.
THE DYNAMIC (FUNCTIONAL)-EQUIVALENCE THEORY OF TRANSLATION AND CHOMSKY'S GENERATIVE GRAMMAR.....72

Ter-Sargsyan L.
PRINCIPLES OF LANGUAGE ECONOMY
IN E-DISCOURSE 78

Ter-Sargsyan L., Grigoryan H.
CASE STUDY AS AN EFFECTIVE METHOD IN TEACHING
ENGLISH AS A FOREIGN LANGUAGE FOR STUDENTS OF
ECONOMICS AND BUSINESS 86

BOŽENA DŽUGANOVÁ
SOME ASPECTS OF MEDICAL ENGLISH TERMINOLOGY 93

Zhang Luping and Liu Lu
A STUDY ON THE ENGLISH TRANSLATION OF MARRIAGE
LAW FROM THE PERSPECTIVE COMPARATIVE LAW 111

Այվազյան Ա.
Երևանի պետական համալսարան

ԼԵԶՎԱՈՃԱԿԱՆ ՀՆԱՐՔՆԵՐԻ ԴԵՐԸ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԼԵԶՎՈՒՄ

ABSTRACT
THE ROLE OF STYLISTIC DEVICES IN LEGAL LANGUAGE

The present article aims at highlighting the stylistic devices in the Language for Law which play an essential role in making the legal discourse more perceptible. Assuming the significance of Legal Language in modern society, we've taken up a research on the legal text, viewing it both as a source of juridical information and as a linguistic unit with its lexical, morphological and syntactic peculiarities.

Key words: *legal discourse, oral and written speech, stylistic device, legal act*

РЕЗЮМЕ
РОЛЬ СТИЛИСТИЧЕСКИХ ПРИЕМОВ В ЯЗЫКЕ ЗАКОНА

В рамках данной статьи исследуется роль стилистических приемов в языке закона, способствующих оптимализации процесса законотворчества. Необходимость изучения языка закона в современной жизни неоспорима, так как именно посредством языка приводится в движение сложный законодательный механизм. Настоящая статья рассматривает юридический текст в двух измерениях: как источник юридической информации, и как языковую единицу, имеющую свои лексические, морфологические и синтаксические особенности.

Ключевые слова: *юридический дискурс, речевые стратегии, стилистический прием, правовой акт*

ԱՄՓՈՓՈՒՄ

Ներկայացվող հոդվածի շրջանակում փորձ է արվում ուսումնասիրել լեզվաոճական հնարքների դերը իրավունքի լեզվում, որը, ըստ նպատակի գերակայության, ունի առանձնահատուկ նշանակություն արդյունավետ և ընկալուչ խոսույթի (դիսկուրսի) կառուցման գործում: Իրավաբանական խոսույթը ներկայացված է և՛ որպես իրավական աղբյուր, և՛ որպես լեզվի բառագիտական, ձևաբանական ու շարահյուսական առանձնահատկություններով լի հոլովույթ:

Բանալի բառեր՝ *իրավաբանական խոսույթ (դիսկուրս), խոսքային ռազմավարություն, լեզվաոճական հնարք, իրավական ակտ*

Իրավունքը մի մասնիկն է մարդկանցով լի իրական աշխարհի, ուր մարդիկ ապրում են, շփվում և հաղորդակցվում միմյանց հետ:

Իրավունքն իր ծագմամբ սերտորեն փոխկապակցված է լեզվին. այն առարկայանում է լեզվում և ճանաչվում լեզվի միջոցով:

Լեզուն հասարակական հաղորդակցման միջոց է: Առօրյայում մարդիկ փոխադարձ հարաբերություններ են ստեղծում միմյանց հետ և այդ հարաբերությունները, նրանց ամենօրյա կապը անկարելի է առանց լեզվի:

Լեզվի գործառման միջավայրը մարդկային հասարակությունն է, կրողը՝ այդ հասարակության խոսող և մտածող յուրաքանչյուր անհատ: Հետևաբար՝ լեզուն ճանաչել և հասկանալ կարող է միայն լեզվակիրը: Լեզուն ոչ միայն հաղորդակցման միջոց է, այլ նաև ազգի նկարագիր, աշխարհաճանաչողություն, մտածողություն, հոգեբանություն, կենսափիլիսոփայություն: Պատահական չէ, որ լեզուն եղել է ամենատարբեր գիտությունների ուսումնասիրության առարկա՝ լեզվաբանությունից մինչև իրավագիտություն:

Դեռևս հին ժամանակներից իրավագիտության տեսության մեջ առկա է եղել իրավունքի հաղորդակցման նշանակության իմաստավորման միտումը: Իրավագիտության մեջ իրավունքը սահմանվում է որ-

պես հանրալեզվաբանական հաղորդակցման հատուկ ձև: Իրավունքի հաղորդակցությունը դիտարկվում է որպես հարաբերությունների համակարգ, որի սուբյեկտները իրավական տեղեկատվություն են ստանում իրավական տեքստերի մեկնաբանմամբ և փոխանցում են իրավական տեղեկատվությունը իրավական փաստաթղթերի միջոցով, որոնք ստեղծվում են սեփական պարտավորությունների և իրավունքների իրականացման արդյունքում: Իրավունքի դիտարկումը հաղորդակցման մշակույթի տեսանկյունից ներկայացված է ինչպես լեզվաբանների, այնպես էլ իրավագետների գիտական աշխատություններում՝ նպատակ հետապնդելով մեկնաբանել իրավունքի հաղորդակցման ոճական արտահայտչամիջոցները, ուսումնասիրել իրավունքի և լեզվի պրագմատիկ յուրահատկությունները, ինչպես նաև դրա թեմատիկ և իմաստաբանական պարամետրերը:

Իրավաբանական հաղորդակցման նպատակն է սոցիալական համակարգի հասարակական հարաբերությունների կարգավորումը, որոշակի իրավունքների և պատասխանատվությունների ամրապնդումը, հասարակական կյանքից կամայականության և անվերահսկելիության բացառումը, սոցիալական համակարգի համապատասխանեցման ապահովումը տիրող արժեքներին և գաղափարներին: Այսպիսով՝ իրավունքը համարվում է և՛ որպես առանձնահատուկ սոցիալական լեզու, և՛ որպես սոցիալական փոխներազդման բազմակողմանի, համընդհանուր միջոց, որն իրենից ներկայացնում է իրավական հաղորդակցման հաճախակի վերարտադրման գործընթաց (Поляков, 2005):

Իրավագիտական տեքստերի կառուցվածքային և շարահյուսական-տերմինաբանական առանձնահատկությունները համակարգային պատկերացում չեն տալիս իրավունքի լեզվի հաղորդակցման մասին: Հետևաբար՝ անհրաժեշտ է գործընթացները դիտարկել նաև լեզվի գործունեության ավելի սոցիալական լայն համատեքստում, իսկ ավելի ստույգ՝ խոսույթի (դիսկուրսի) տեսանկյունից: Իրավաբանական լեզվի ոճալեզվական առանձնահատկությունների բացահայտումը համեմա-

տաբար երիտասարդ, սակայն զարգացող ուղղություն է ժամանակակից լեզվաբանության մեջ:

Իրավունքի լեզուն բառային, սինտակտիկ և ոճական միջոցների ամբողջությունն է, որոնց միջոցով ձևավորվում են օրենքներ կամ այլ իրավական ակտեր: Վերջիններիս իրավական պահանջ և ձևական որոշակիություն են հաղորդում լեզվաոճական հնարքները: Ավելին, որոշ լեզվաբաններ բազմիցս հնչեցրել են այն կարծիքը, որ լեզուն, ծառայելով օրենքին, ազդում է նրա լեզվատրամաբանական մտահորիզոնի վրա:

Հատկանշական է, որ ժամանակակից իրավաբանական կոնտեքստում մեծ է լեզվաոճական միջոցների դերը արդյունավետ և ընկալուչ խոսույթի կառուցման գործում, քանի որ լեզվաոճական միջոցները հուզականություն են հաղորդում խոսույթին՝ ուշադրությունը հաճախ շեղելով փոխանցվող իրազեկությունից: Լեզվաոճական տեսանկյունից իրավաբանական խոսույթի **գրավոր** և **բանավոր** ժանրերը ձևակերպվում են պաշտոնական-գործնական ոճի նորմերին համապատասխան:

Բանավոր ժանրը ներառում է իրավաբանական խորհրդատվությունը /legal counseling/, վկաների հարցաքննումը /interogation of witnesses/, խաչաձև հարցաքննությունը /cross-examination/, մինչդատական քրեական վարույթը /pre-trial criminal proceedings/, դատաքննությունը /trial/, դատական խոսքը /judicial rhetoric, forensic discourse/, երդման բերելը /adjuration, administration of the oath/, դատարանում մեղադրանքի պաշտպանությունը /pursuing a charge at court/ և այլն:

Գրավոր ժանրին են պատկանում՝ *օրենսդրական ակտերը* – կանոնակարգ /the rules of procedure, bye-laws/, հրաման /order/, օրենք /law/, մեղադրական ակտ /indictment/, դատական օրենսգիրք /Judicial Code/ և *գործընթացային ակտերը* – որոշում /judicial award, decisions of court/, վճիռ /civil judgement/, դատավճիռ /verdict, criminal judgement/, ձերբակալման օրդեր (հրաման) /warrant of arrest/, դատական նիստի արձանագրություն /court record(s)/, բողոքարկում /petition of appeal, appeal case/, հակահայց /counterclaim/ և այլն: Այսպիսով՝ իրավաբանական խոսույթը /դիսկուրսը/ դառնում է հետազոտության առարկա և՛ որպես

իրավական աղբյուր, և՛ որպես լեզվի բառագիտական, ձևաբանական, շարահյուսական առանձնահատկություններով լի «ռեսուրսների կենտրոն»:

Թեև իրավագիտությունը և լեզվաբանությունն իրենցից ներկայացնում են գիտական տարբեր ոլորտներ, այնուամենայնիվ տեքստերի ուսումնասիրության ժամանակ միմյանց հետ խիստ փոխկապակցված են: Դա է պատճառը, որ իրավունքի ու լեզվի կապը բազմիցս արծարծվել է ականավոր լեզվաբանների աշխատություններում: Հայտնի լեզվաբաններ Լ. Վ. Շչերբան և Գ. Օ. Վինոկուրը առաջին անգամ ուշադրություն են դարձրել իրավաբանական փաստաթղթերի լեզվի «պաշտոնական ոճ» հետազոտության արդիականությանը (Щерба, 1974; Винокур, 2009): Այդ ժամանակից ի վեր իրավական տեքստերի լեզուն ուսումնասիրվում է պաշտոնական-գործնական ոճում:

Ոճագիտությունը, ձևավորվելով իբրև անկախ գիտակարգ, ուսումնասիրում է լեզվի ոճական համակարգը, լեզվի յուրաքանչյուր միավորի կիրառման եղանակներն ու արտահայտչական առանձնահատկությունները՝ մշակելով համապատասխան նախադրյալներ խոսքն ավելի արտահայտիչ և պատկերավոր դարձնելու:

Գործառական ոճաբանությունը հիմնվում է լեզվի գործառույթի լեզվահասկացողական բնույթի վրա: Յուրաքանչյուր գործառական ոճ բնութագրվում է լեզվական հնարքների կիրառմամբ: Ըստ Կոժինայի՝ ոճը օբյեկտիվորեն տրված չէ լեզվում, այլ ձևավորվում է խոսքային գործունեության շնորհիվ (Кожина, 1971):

Առանցքային նշանակություն ունի նաև այն փաստը, որ գործառական ոճում բառերի զգալի մասը չեզոք, միջոճային բառեր են, որոնց հիման վրա էլ առանձնանում են ոճին բնորոշ բառապաշարն ու դարձվածաբանությունը: Բոլոր գործառական ոճերի համար քերականական միջոցները ընդհանուր են: Լեզվի քերականությունը մեկն է, սակայն կախված իր կառուցվածքից՝ յուրաքանչյուր գործառական ոճ յուրովի է օգտագործում քերականական կառույցները: Օրինակ՝ պաշտոնական գործառական ոճին բնորոշ են կրավորական, անենթակա նախադասու-

թյունները, գրական ոճում առկա է ֆիքսված շարադասություն, հրապարակախոսական-իրավագիտական ոճին բնորոշ են հռետորական տարրեր և այլն: Նմանատիպ քերականական կառույցների կիրառումը նույնպես հարաբերական է, քանի որ մի գործառական ոճին բնորոշ քերականական կառույցը կարող է կիրառվել մեկ ուրիշում ևս: Այս ամենը հաշվի առնելով՝ հաճախ վերլուծության առարկա են դառնում նախորդ դարաշրջանների օրենսդրական ու գիտական տեքստերի բառագիտական և շարահյուսական առանձնահատկությունները, որոնց հետազոտության արդյունքում եզրակացություն է արվում պաշտոնական-գործնական ոճի կազմավորման և հատկությունների վերաբերյալ:

Նշանավոր լեզվաբանների ուսումնասիրություններում կարելի է հանդիպել ոճի սահմանման տարբեր ձևակերպումներ. օրինակ՝ Չարլզ Բալին գտնում էր, որ ոճը առաջանում է լեզվում եղած տարբեր արտահայտությունների երկընտրանքից, որոնցից յուրաքանչյուրն ունի տարբեր արտահայտչական իմաստ (Charles Bally, 1991):

Ըստ Արթուր Շոպենհաուերի՝ ոճը «մտքի կերպարանքն է»: Նա գտնում էր, որ կարևոր չէ, թե ինչ բառեր կընտրվեն. գրողի ոճը կրում է նրա անհատականությունը (https://is.muni.cz/th/79361/pedf_m/THESIS.pdf):

Մինչդեռ ակնառու լեզվաբան Վինոգրադովը ոճը սահմանում էր իբրև «հասարակայնորեն ճանաչված և գործառույթով պայմանավորված ընտրելու, համատեղելու, կիրառելու մեկ ամբողջական ներքին միասնություն» (Виноградов, 1963):

Հետաքրքիր է նաև Գալպերինի տեսությունը: Ըստ նրա՝ ոճը սահմանվում է իբրև բառային, քերականական և հնչյունական միավորների փոխկապակցված մի համակարգ, որը ծառայում է որոշակի նպատակի (Гальперин, 1981):

Խոսքի ոճային ուսումնասիրության կարևորագույն արդյունք կարելի է համարել լեզուն՝ իբրև արտահայտությունների հոմանշային համակարգ (Щерба, 1974), բառագիտական տիպաբանական ոճի հիման վրա ստեղծված բառագիտական, բառակազմական, ձևաբանական շարահյուսական միավորները (Виноградов, 1963; Кожина, 1971; և այլն),

ինչպես նաև լեզվական միավորների ձևավորումը՝ սպեցիֆիկ, հարաբերական սպեցիֆիկ և ոչ սպեցիֆիկ կամ չեզոք, որոնց համադրումը սահմանում է գործառական ոճի կառուցվածքային ինքնատիպությունը, ոճի զարգացման ընթացքում լեզվական և արտալեզվական միավորների առանձնացումը (Гиндин, 1974), ոճի հետագա զարգացումը սահմանող երկու միտումների՝ ինտեգրման ու տարբերակման բացահայտումը (Пиголкин, 1972), գրականության լեզվի գործառական ազդեցության հաստատումը նրա քերականական առանձնահատկությունների վրա (Кожина, 1971):

Սահմանումների բազմազանությունը վկայում է այն մասին, որ լեզվառոճական միջոցները դարձել են լեզվաբանական բազմակողմանի ուսումնասիրության առարկա՝ մասնավորապես իրավունքի շրջանակում:

Լեզվի ոճական տարբերակման ուսուցումը տեքստի լեզվաբանական տեսության մեջ առաջ է բերել նոր հիմնադրույթներ: Իմաստին և բովանդակությանը նպատակաուղղված իրավաբանական տեքստերում լեզվական միավորների կազմավորման նոր հնարքներ և նորմեր են հաստատվել: Իրավագիտության մեջ օրենսդրության լեզվական ինքնատիպությունը օրենսդրական ոճագիտության խնդիր է առաջ քաշել, որը լուծվում է իրավունքի ընդհանուր տեսության հայեցակարգային դրույթի սահմաններում: Պաշտոնական-գործնական ոճի տեքստերի առանձնահատկության ուսումնասիրությունն արդիական է դարձել մասնավորապես ընթացակարգային փաստաթղթերում, ինչպես, օրինակ, սոցիալական իրավունքը հարաբերություններ է սահմանում աշխատողների իրավունքներին համապատասխան՝ նախատեսելով որոշակի չափորոշիչներ և ելակետային սկզբունքներ: Ահա այստեղ օգնության են հասնում լեզվական միջոցների ամբողջ ճարտարությունն ու հարստությունը՝ ներկայացված ընթացակարգային, ինստիտուցիոնալ, մտավոր, տարածքային-կարգավիճակային սպեկտորի տեսքով՝ ընդգծելով իրավունքի գերակայության երաշխավորման անհրաժեշտությունը:

Անդրադառնալով տեքստի լեզվաոճական առանձնահատկություններին՝ Ի. Ռ. Գալպերինն իր առջև խնդիր է դնում «նկարագրել և վերլուծել ինտուիտիվ ընկալվող տեքստի տարրերը լեզվաոճական տեսանկյունից՝ ուղենշելով վերջիններիս փոխկապակցվածությունն ու փոխպայմանավորվածությունը, որոնք ապահովում են պրագմատիկ ուղղություն հաղորդակցման գործառույթով»: Տեքստը դիտարկելով որպես լեզվի գրավոր ձև և իրականության գրաֆիկական արտացոլում՝ հետազոտողն առանձնացնում է տեքստի պարտադիր և ոչ պարտադիր (ֆակուլտատիվ) տարրերը որպես լեզվաբանական ուսումնասիրություն: Գալպերինը տեքստի տեղեկատվությունը՝ բովանդակությունը, անվանում է ամբողջության լիարժեքություն, տեքստի հիմնական կատեգորիա և առանձնացնում է տեղեկատվության տեսակներ, որոնց շնորհիվ կարելի է դասակարգել տեքստը, ինչպես, օրինակ, իրավաբանական փաստաթղթերի տեքստերը դիտարկվում են որպես պաշտոնական-գործառական ոճի տեքստեր, իսկ ըստ բնույթի՝ տեղեկատվությունը բաժանվում է ակտերի, պայմանագրերի, բողոքների և այլն (Гальперин, 1981):

Լեզվական նորմերի տիրապետումն առանձնապես կարևորվում է երկլեզվության պայմաններում, քանի որ մայրենի լեզվից բացի օտար լեզուների տիրապետումն իրավագետի համար անհրաժեշտություն է դառնում: Իրավաբաններն իրավունքի լեզվի ուսումնասիրությունները կապում են այնպիսի հասկացությունների հետ, ինչպիսիք են իրավունքի ձևն ու բովանդակությունը, կանոնավոր (նորմատիվ) և անհատական (ինդիվիդուալ) ակտերի տեխնիկան, օրենսդրական գործունեության մոդելավորումը, դատական գործընթացի մշակույթը (խոսքային կուլտուրան):

Սույն մոտեցման ուսումնասիրություններում նոր դեր են խաղում Ա. Ա. Ուշակովի աշխատությունները, որտեղ ուշագրավ է համարվում «Օրենսդրական ոճագիտություն» կոչվող նոր գիտակարգի ստեղծման անհրաժեշտությունը: Այս նոր գիտակարգը վերագրվում է և՛ լեզվաբանությանը, և՛ իրավաբանությանը: Ա. Ա. Ուշակովը օրենսդրական ոճա-

գիտությունը սահմանում է որպես իրավաբանական տեխնիկայի բաղադրիչ մաս, որն ուսումնասիրում է «օրենքի լեզուն որպես հատուկ ոճ, որը կիրառվում է իրավունքի մեջ», և առաջարկում է այն անվանել, այսպես կոչված, «законография» (Ушаков, 1967):

Ա. Ս. Պիգոլկինը նույնպես համամիտ է Ա. Ա. Ուշակովի հետ և կարծում է, որ իրավաբանական տեխնիկան պետք է ուսումնասիրի օրենսդրության հետևյալ հատկանիշները՝ պաշտոնական բնույթ, ձևակերպում, տրամաբանություն, ավարտունություն և շարադրանքի հաջորդականություն, զսպվածություն, զգացմունքային երանգների բացակայություն, հստակություն և այլն (Пиголкин, 1972):

Չժխտելով լեզվի դերն իրավունքի մեջ և նրա գիտական հետազոտության հնարավորությունը՝ Ս. Ս. Ալեքսեևը ուշադրություն է դարձնում այն փաստերին, որ օրենսդրական ոճագիտության հիմնախնդիրներն ուսումնասիրելիս «հնարավոր է կիրառել ընդհանուր ոճագիտության, լեզվաբանության, գրականագիտության այնպիսի կատեգորիա, որը միասեռ է, համապատասխան իրավական կատեգորիային և անհրաժեշտ է իրավաբանական կանոնավոր (նորմատիվ) փաստաթղթերն ավելի խորն ըմբռնելու համար»: «Իրավունքի լեզու» հասկացության մեջ նա դիտարկում է երկու ասպեկտ՝ որպես օրենսդրի կամքի արտահայտում իրավունքի լեզուն համարվում է գրական խոսքի ինքնուրույն տեսակ, իսկ որպես հոգևոր մշակույթի տարր՝ լեզուն կենտրոնացնում է իրավական ակտերի ոճի առանձնահատկություններն ու արժեքները, իրավիճակի ձևակերպման հստակությունն ու խստապահանջությունը, ընդհանրացված ձևի մատչելիությունն ու համառոտությունը (Алексеев, 1982):

Ժամանակակից հանրույթում լեզվական և ոճային առանձնահատկությունների ուսումնասիրումը սահմանվում է նաև դիդակտիկ պատկերացումներով, քանի որ այն ունակ է տեսական անհրաժեշտ հիմնավորվածություն ապահովել թարգմանիչներին իրավունքի ոլորտում կրթելու համար՝ ելնելով իրավաբանական դիսկուրսում գործող տեքստերի առանձնահատկություններից ու հատուկ բառապաշարի միավոր-

ներից: Բացի այդ՝ իրավագիտության ոլորտում կիրառվող իրավական տերմինները դեռևս համակարգային ուսումնասիրության (ֆիքսացիայի) չեն ենթարկվել, ինչը լուրջ բացթողում է համարվում, որը խոչընդոտ է ստեղծում միջմշակութային հաղորդակցության ժամանակ: Դրա հետ մեկտեղ գիտնականների կողմից շեշտվում է տեսական ամուր հիմքի անհրաժեշտությունը, որ ընկած է ազգային և միջազգային հարթություններում տերմինաբանության ունիֆիկացման ու ներդաշնակեցման հիմքում: Այդ իսկ պատճառով բազմիցս լեզվառճական ուսումնասիրությունների է ենթարկվել իրավաբանական խոսույթը, ելնելով խոսքի՝ որպես կառավարելի և անգիտակցաբար պլանավորվող գործողության ֆակտորից: Ավելին՝ խոսքը նաև համարվում է ռազմավարական գործընթաց, մտածական գործողություն՝ ուղղված որոշակի հաղորդակցման խնդրի հաջող լուծումն ապահովող խոսքային մարտավարական գործողությունների մշակմանն ու իրագործմանը: Օրինակ՝ իրավական ակտերում կիրառվում են նախաբանային /in case of, to commence with, opening the debates, as a primary consideration etc/, վերաբերական /referring to, to remind, don't forget, appealing to etc/, նպատակային /finally, to conclude, summing up etc/, ինչպես նաև հակասական և հակադրական /in direct contradiction, doubtful, illogical, ambiguous, in comparison to, despite the fact that etc/ բառեր և բառակապակցություններ, որոնք, հանդես գալով որպես խոսքային հնարներ, ապահովում են խոսքի ավելի տպավորիչ ու ցայտուն լինելը:

Հարկ է նշել, որ առանձնահատուկ է դիսկուրսի տեսանկյունից խոսքի մեխանիզմների սահմանման վերլուծությունը իրավական ճշմարտության հաստատման գործընթացում: Նման մոտեցման արդյունքում, իրավաբանական խոսույթի վերլուծությունը լեզվաբանության մեջ հաստատված հասկացությունների տեսակետից, թույլ է տալիս նկարագրելու այն որպես կառուցվածքային և կանոնակարգվածության բարձր մակարդակով առանձնացող բազմազանությամբ:

Այսպիսով, իրավունքի ձևի և բովանդակության փիլիսոփայական կատեգորիան վերլուծելիս հետազոտողները հանգում են այն եզրակա-

ցության, որ կանոնավոր (նորմատիվ) ակտերի կատարյալ լեզվական ձևը իրավունքի նորմի գաղափարախոսական ազդեցությունն է: Ճշգրիտ խոսքային ռազմավարության խոչընդոտ կարող են դառնալ իրավական ակտում առկա մակերեսային դատողությունները, անբավարար փաստերի առկայությունը, մեկնաբանվող շարադրանքի անորոշությունը, խոսքի նպատակաուղղվածության բացակայությունը, ոչ հստակ տրամաբանական երանգավորումները և այլն:

Հիրավի, դժվար թե գտնվի հասարակական գործունեության մեկ այլ ոլորտ, որտեղ բառի սխալ կամ անտեղի գործածությունը, սխալ կառուցված արտահայտությունը, իմաստի և տեքստային ըմբռնման հակասությունն ունենա ավելի խնդրահարույց և անասելի հետևանքներ, քան իրավունքի ոլորտն է (Алексеев, 1982):

Ուստի՝ իրավաբանական ակտերի ձևի և բովանդակության գնահատման ժամանակ ոչ մի իրավաբան չի կարող անտեսել տեքստի վերոհիշյալ լեզվառճական առանձնահատկությունները, քանի որ իրավական ակտի բովանդակության և ակտի միջև ցանկացած անհամապատասխանություն, ցանկացած հակասություն կարող է լինել ակտի ոչ նպատակաուղղված գործողության պատճառ և արդյունքում հանգեցնել զրոյական կամ բացասական արդյունքի: Դիպուկ է մեջբերել ԱՄՆ-ի Գերագույն դատարանի նախկին դատավոր Վ. Օ. Դուգլասի խոսքերը. «Միայն ճշգրիտ լեզու կիրառելով կարող են ջրերը մնալ մաքուր և չաղտոտված՝ հնարավորություն տալով արդարադատության ընթացքին զերծ մնալ խեղաթյուրումներից և մոլորեցումներից» (Burton, 1999):

Ուսումնասիրելով լեզվառճական հնարքների դերը իրավունքի լեզվում եզրահանգում ենք՝ լեզուն և իրավունքը անքակտելիորեն կապված են միմյանց. իրավունքը առարկայանում է լեզվի միջոցով, իսկ լեզվին իրավական պահանջ հաղորդում են լեզվառճական միջոցները: Վերջիններս ծառայում են ոչ միայն կանոնակարգված մտքերի ձևավորմանը, այլև դրանց հաղորդմանը կամ արտահայտմանը, որոնք ունեն հույժ կարևոր նշանակություն իրավագիտության ոլորտում: Այս ամենը վկայում է այն մասին, որ իրավունքի լեզուն համարվում է իրավագիտու-

թյան հենարանը, որով ստեղծվում են կանոնակարգեր, օրենքներ, սահմանադրություններ, օրենսգրքեր և այլ իրավական ակտեր՝ սահմանելով վարքագծի պարտադիր կանոններ իրավահարաբերության բոլոր կողմերի համար։

Ամփոփելով կարելի է փաստել՝ իրավունքի լեզուն սովորաբար կարծրատիպային է, իրավագիտական խոսույթը՝ մշակութահեն, իրավունքի լեզվին հատուկ են բազմիմաստությունը և հոմանշությունը, իսկ իրավագիտական տեքստերն ունեն հատուկ պրագմատիկ կարգավիճակ, որոնք առավել խորը ուսումնասիրության կարիք ունեն։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Burton W. C**. (1999), Legal Thesaurus (third edition), New Library Reference USA, p.6
2. **Charles Bally** (1991), Charles Bally and Pragmatics, The Johns Hopkins University Press, Switzerland.
3. **Lawrence M. Solan & Peter M. Tiersma** (2012), The Oxford Handbook of Language & Law, Brooklyn Law School Publication.
4. **Алексеев С.С.** (1982), Общая теория права: В 2-х т. -М.: Юрид. лит., Т. 2, с. 285.
5. **Виноградов В.В.** (1963), Стилистика. Теория поэтической речи. Поэтика. -М.: Изд-во АН СССР, -с. 94
6. **Винокур** (2009), «Закономерности стилистического использования языковых единиц». -2-е изд. - Либроком.
7. **Гальперин И.Р.** (1981), Текст как объект лингвистического исследования. М.:Наука, 139 с.
8. **Гиндин, С. И.** (1977), Советская лингвистика текста: Некоторые проблемы и результаты /1948-1975/ . –Изв. АН СССР. Сер. Лит. И яз., т. 36, Н 4, с. 38-361.
9. **Бондарко А. В.** (1971), Грамматическая категория и контекст. - Л.: *Наука,* 1971. - 115 с.; Ильенко С. Г.
10. **Кожина М. Н.** (1979), Соотношение стилистики и лингвистики текста.– Науч. докл.высш. школы. Филол. науки, N5, с. 62-68.
11. **Юрий Поляков** (2005), От А до Я. Самая полная энциклопедия афоризмов, мыслей и цитат, Москва.

12. **Ушаков А .А.** (1968), Очерки советской законодательной стилистики: Учеб.пособие. Ч. I. - Пермь, 1967. - 206 с.; его же. Язык советского закона: Исторические заметки. - Рус.речь, 1968, № I, с. 40-43.
13. **Пиголкин А.С.** (1972), Основные особенности языка законодательства как особого стиля литературной речи. - В кн.: Уч. зап. ВНИИ сов. законодательства, вып. 26, с. 3-31.
14. http://www.juridicainternational.eu/index.php?id=12456
15. https://is.muni.cz/th/79361/pedf_m/THESIS.pdf
16. https://tipsforlawyers.com/legalese/

Ապրեսյան Մ., Վանոյան Լ.
Yerevan State University

ԳԻՏԱԿԱՆ ՏԵՔՍՏԻ ԺԱՆՐԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

ABSTRACT
PRINCIPLES OF THE GENRE DIFFERENTIATION OF SCIENTIFIC TEXTS

Textology in recent decades has become one of the main areas attracting attention of linguistics. Among others, we have to assume that the main achievements of modern textology should be considered the accentuation and classification of text types, as well as their correlation with styles.

As is known, one of the most important types of functional styles is the scientific style, which, in its turn, has undergone significant genre segregation.

In the present paper the scientific style is presented in three genres: proper scientific, genre of textbooks and popular scientific. Based on this classification we suggest a slightly different classification, presenting the scientific style with proper scientific and pseudo-scientific genres, the latter dividing into popular scientific and textbook genres.

Key words*: functional style, scientific style, strictly scientific genre, near-scientific genre, genre of textbooks, popular science genre*

РЕЗЮМЕ
ПРИНЦИПЫ ЖАНРОВОЙ ДИФФЕРЕНЦИАЦИИ НАУЧНЫХ ТЕКСТОВ

Текстология в последние десятилетия стала одной из основных сфер, привлекающих пристальное внимание лингвистов. Наряду с другими достижениями современной текстологии необходимо, на наш взгляд, считать наиболее важными акцентуализацию и классификацию видов текста, а также корреляцию этих видов и стилей.

Как известно, одним из основных видов функциональных стилей является научный стиль, который, в свою очередь, подвергается значительной жанровой сегрегации. При всем наличии разногласий касательно вышеука-

занной проблемы, общее распространение находит мысль о репрезентации научного текста по трем основным жанрам: собственно-научному, научно-популярному и жанру учебников. Основываясь на этом разделении, в данной статье мы предлагаем несколько иную классификацию: научный стиль представляется собственно-научными и околонаучными группами, где последние подразделяются на научно-популярный жанр и жанр учебников.

Ключевые слова: *функциональный стиль, научный стиль, собственно научный жанр, околонаучный жанр, жанр учебников, научно-популярный жанр*

ԱՄՓՈՓՈՒՄ

Տեքստագիտությունը վերջին տասնամյակներում լեզվաբանությանն ամենից շատ հետաքրքրող ոլորտներից է: Ի թիվս այլոց՝ ժամանակակից տեքստագիտության կարևոր ձեռքբերումներից պիտի համարել տեքստի տեսակների առանձնացումն ու խմբավորումը, այլև այդ տեսակների և ոճերի հարաբերակցությունը: Գործառական ոճի կարևոր տեսակներից է գիտական տեքստը, որն իր հերթին ժանրային բաժանումների է ենթարկվել: Տարակարծություններով հանդերձ՝ կարծես ընդհանուր տարածում է գտել գիտական տեքստը երեք ժանրով ներկայացնելը՝ զուտ գիտական, դասագրքային և գիտահանրամատչելի: Հիմնվելով այս բաժանման վրա՝ փոքր-ինչ այլ դասակարգում ենք առաջարկում՝ գիտական ոճը նախ՝ ներկայացնելով զուտ գիտական և գիտականամերձ ժանրերի խմբերով, ապա՝ գիտականամերձ խումբը տրոհելով դասագրքային և գիտահանրամատչելի ժանրերի:

Բանալի բառեր՝ *գործառական ոճ, գիտական ոճ, զուտ գիտական ժանր, գիտականամերձ ժանր, դասագրքային ժանր, գիտահանրամատչելի ժանր:*

Ներածություն: Գործառական տեքստի ժանրային տարբերակումը ոճագիտության հիմնական խնդիրներից մեկն է: Մեր օրերում լեզվաբանները հասել են գիտական վերացարկման մի մակարդակի, որտեղ հակադրելով տեքստի քննությունը ընդհանուր բանասիրական և գրականագիտական եղանակներին՝ տեքստասերման դիտարկումն իրականացնում են հարացուցայնության ու շարակարգայնության գոյաշեր-

տերի հարաբերությամբ: Ավելին՝ գրականագիտությունից փոխառելով «ժանր» հասկացությունը՝ լեզվաբանորեն նո՛ր իմաստավորում են տալիս դրան՝ վեր հանելով ժանրի և ոճի փոխհարաբերությունը:

Գիտական տեքստի ժանրավորման հայեցակարգերի ակնարկային քննություն: Ժանրի հասկացությունը դիտարկելիս տարբեր մասնագետներ տարբեր բնութագրեր են տալիս դրան: Այսպես՝ Ե. Տրոյանսկայան գիտական գրականության՝ ժանրերի և ենթաոճերի շերտավորումը կապում է այն բանի հետ, որ գիտական ստեղծագործությունները կատարում են հաղորդակցական տարբեր առաջադրանքներ, հանրամշակութային տարբեր գործառույթներ թե՛ բովանդակության, թե՛ արտահայտության պլանում[1]: Ե. Տրոյանսկայան որպես գիտական գրականության ենթաոճ հիշատակում է գիտահրապարակախոսականը և գիտահանրամատչելին:

Գիտական գրականության ժանրերը, ծագած լինելով հաղորդակցական տարբեր խնդիրների ազդեցությամբ, խմբավորվում են հետևյալ կերպ.

1) **միջուկային ժանրեր**, այսինքն՝ ոճի յուրահատկությունը, նրա «դիմագիծը» որոշող հիմնական ժանրեր՝ իբրև ոճի յուրօրինակ «օրենսդիրներ» (հոդված, գիտատեխնիկական հաշվետվություն, մենագրություն, ատենախոսություն),

2) ոճի հիմքը չկազմող **շրջածրային ժանրեր** (դասագիրք, ուղեցույց, տեղեկատու, գիտական կենսագրություն, գրախոսություն, ծանուցում, հաղորդում, դրույթ),

3) **սահմանային ժանրեր** (գիտական և այլ ոճերի սահմանին գտնվող ժանրեր՝ գիտահանրամատչելի, գիտահրապակախոսական, գիտական-վարչագործարարական և այլն):

Բովանդակության պլանում տարբերակվում են՝ 1) **ամրակայող գիտակարգեր**, 2) **ընդլայնող գիտակարգեր**, 3) **փոփոխող գիտակարգեր**:

---

[1] Տե՛ս **Е. Троянская**, Особенности жанров научной литературы и отбор текстов на различных этапах обучения научных работников иностранному языку // Функциональные стили. Лингвометодические аспекты. М., 1985, էջ 190-192:

Համաձայն գիտական իրազեկության բնույթի չափանիշի՝ Ե. Տրոյանսկայան ժանրերը խմբավորում է **առաջնային** և **երկրորդային** օղակներով[2]: Երկրորդային ժանրերը, ծագած լինելով առաջնայինի ազդեցությամբ և հաղորդակցման տարբեր նպատակներով ենթակա լինելով մշակման, ներկայանում են այնպիսի տեսակներով, ինչպիսիք են ծանուցումը, հաղորդումը, գրախոսությունը, դրույթը: Լայն առումով երկրորդային ժանրեր կարելի է համարել տեղեկատվական և ուսումնական բնույթի տարասեռ գրականության տեքստերը: Մնացյալ ժանրերը հատկացվում են առաջնայինին:

Պ. Խովանսկայան ժանրերն առանձնացնելիս դրանց հաղորդակցական ուղղվածությունից է ելնում[3]: Նա գիտական արձակի գործառական ոճի ժանրեր է համարում քննախոսությունը, ատենախոսությունը, հոդվածը, դասախոսությունը, գիտական գրախոսությունը:

Ն. Ռազինկինան ժանրը բնորոշում է որպես «խոսքագործառական ոճի տարատեսակ՝ որոշարկված երեք գործոնով՝ ա) կառուցվածքի ձևով, բ) առկա իրազեկության բնույթով, գ) այդ իրազեկության հուզական երանգավորմամբ»[4]: Ըստ այդ չափանիշների՝ նա առանձնացնում է գիտական արձակի հետևյալ ժանրերը՝ ա) մենագրություն, բ) հանդեսի հոդված, գ) գրախոսություն, դ) դասագիրք (ուսումնական ձեռնարկ), ե) դասախոսություն, զ) զեկուցում, է) իրազեկում, ը) բանավոր ելույթ, թ) տեղեկատու նյութեր:[5]

Փոքր-ինչ ավելի երկար ուզում ենք կանգ առնել Յ. Վասիլևի և Տ. Մալչևսկայայի հայեցակարգերի վրա:

Ժանրով նշութավորված տեքստերը, ըստ Յ. Վասիլևի, հնարավորություն են տալիս հաղորդելու և ընկալելու իրազեկությունը նվազագույն կորուստներով՝ շնորհիվ ընթերցողի՝ տեքստատիպերի հիմնա-

---

[2] Անդ, էջ 192-193:

[3] Տե՛ս **З. Хованская**, Стилистика французского языка: Учебник для ин-тов и фак. иностр. яз, М., 1984, 344 с., էջ 53:

[4] **Н. Разинкина**, Некоторые общие проблемы изучения функционально-речевого стиля // Особенности стиля научного изложения: Сб. ст., М., 1976 (83-103), с. 85.

[5] Անդ:

կան հարաչափերի իմացության: Այդ հարաչափերից են ձևի ավանդականությունը, ինչպես նաև կառուցվածքայնությունն ու ամբողջականությունը: Հետազոտելով գիտատեխնիկական հոդվածների տեքստերը՝ Յ. Վասիլևը եզրակացնում է, որ հոդվածի ժանրային հորինվածքի առանձին օղակների դիրքավորման հաջորդականության մեջ պարզորոշ ակներև է ճանաչողության աստիճանների դիալեկտիկան, որ է «մուտքի» հատվածի ճանաչողական խնդիրների ձևակերպումից ու հիմնավորումից «հիմնամասի» զննության կամ փորձառքի հիմնական արդյունքների շարադրման ու ընդհանրացման միջոցով «ելքի» հատվածում արդյունքների կիրառության հնարավորությունների կռահմանը հասնելը: Դրա շնորհիվ հոդվածի ձևը պատկերանում է որպես կառուցվածքային ամրատիպ՝ մի անփոփոխակ, որի սահմաններում, սակայն, հնարավոր են շեղումներ: Գործնականորեն շեղումները կարող են արտահայտվել օղակներից մեկի՝ առավելապես ներածության կամ եզրակացության բացթողմամբ, որոնք, սակայն, քողարկված ձևով պարտադիր առկա են հիմնամասում, որտեղ շարադրվում է «նոր» իրազեկությունը՝ հոդվածը կազմավորող կենտրոնը[6]:

Գիտական (կենսաբանական) տեքստի մանրակրկիտ դասակարգում է կատարել Տ. Մալչևսկայան: Նա տեքստը բնութագրում է ըստ շարադրման գերիշխող եղանակի (նկարագրություն, պատմում, քննարկում, բանավեճ), ըստ շարադրման ամբողջականության աստիճանի (հակիրճ, կրճատ, լիակատար, ծավալուն), ըստ իրազեկության տիպի (հիմնական, լրացուցիչ), ըստ նշանակցման բնույթի (ոճագործառական, հուզական, արտահայտչական, գնահատողական), ըստ հասցեատիրոջ բնույթի (նեղմասնագիտական գրականություն, մասնագիտական գրականություն, ընդհանուր կենսաբանական գրականություն, գիտահանրամատչելի գրականություն), ըստ հրապարակումների տեսակային խմբերի (փոքր, միջին, խոշոր ձևեր), ըստ ժանրային խմբերի (իրազե-

[6] Մանրամասն տե՛ս **Ю. Васильев**, Некоторые вопросы языково-стилистического анализа практических форм научной речи (на материале современной научно-технической статьи) // Язык и стиль научной литературы: Теоретические и прикладные проблемы, М., 1977 (47-64), էջ 59-60:

կային գրականություն, հանդեսի հոդվածներ, ուղեցույցներ և տեղեկատուներ, մենագրություններ, հուշապատումներ և այլն)[7]: Գիտական արձակի ստեղծագործությունների դասակարգման համար ամենակարևորը, ըստ Տ. Մալչևսկայայի, հասցեատիրոջ գործոնն է, որը որոշիչ կարող է լինել զուտ գիտական և գիտահանրամատչելի ստեղծագործությունները սահմանազատելիս, այսինքն՝ գիտական արձակի ստեղծագործությունը զուտ գիտական է, եթե նրա հասցեատերը միայն մասնագետն է, իսկ եթե այն նախատեսված է լայն շրջանի ընթերցողների համար՝ ներառյալ մասնագետները, ապա պետք է դիտարկվի որպես գիտահանրամատչելի ստեղծագործություն[8]:

Լ. Սադիկովան, դիտարկելով խոհագրության (էսսեի) տեքստի ոճահորինվածքային հարաչափերը, եզրակացնում է, որ ժանրը հասկանալու ուղին որոշվում է նրա բովանդակության բացահայտմամբ՝ շնորհիվ որոշակի տեքստատիպի ձևային հատկությունների ու հատկանիշների ամբողջական կազմավորման՝ դառնալով այդ տեքստատիպի հաղորդակցական տրվածության կատարման հիմքը: Տեքստի կազմավորման և բաղադրիչների ուսումնասիրությունը պետք է իրականացվի՝ ըստ դրանց՝ որոշակի տեքստատիպի հաղորդակցական տրվածության իրացման դերի[9]:

Ելնելով վերոշարադրյալից՝ հարկ է նկատել, որ կարևոր է դառնում ուշադրության բևեռումը գիտական տեքստի երեք տեսակի վրա (գիտական տեքստ, դասագրքային տեքստ և գիտահանրամատչելի տեքստ) դրանց հորինվածքային կազմավորման, հաղորդակցական նպատակադրման և այդ նպատակին ծառայող շարահյուսական կառույցների տեսանկյունից: Նման հետազոտությունը օգնել է մասնագետներին՝ բացահայտելու գիտական տեքստի տվյալ տիպի ժանրային առանձնա-

[7] Տե՛ս **Т. Мальчевская**, Специфика научных текстов и принципы их классификации (на материале английских биологических текстов) // Особенности стиля научного изложения, М., 1976 (104-116), էջ 115:

[8] Տե՛ս անդ, էջ 109:

[9] Տե՛ս **Л. Садыкова**, Композиционно-стилевые параметры текста эссе // Лингвистические закономерности организации текста: Сб. науч. тр. / моск. гос. лингв. ун-т, М., 1991, Вып. 379, (11-19), էջ 12:

հատկությունները և առավել ճշգրտորել որոշելու դրա ժանրային պատկանելությունը: Դրան հասնելու համար նախապես տրվում է գիտական, դասագրքային և գիտահանրամատչելի տեքստերի ժանրերի ընդհանուր հակիրճ բնութագիրը: Ջուտ գիտական տեքստի ժանրային առանձնահատկություններին կանդրադառնանք գիտական հոդվածի սահմաններում:

Գիտական տեքստի լեզվառճական առանձնահատկությունները: Գիտական հանդեսի հոդվածը անգլիական գիտական գրականության գործառական ոճի ամենից ներկայացուցչական ժանրային տարատեսակությունն է: Գիտական հանդեսների հոդվածները հատկացվում են իրազեկության գիտական առաջնային աղբյուրներին, որոնք հաղորդում են առաջնային արդյունքներ և տեղեկություններ՝ ձեռք բերված գիտական հետազոտությունների ընթացքում: Տարբեր հետազոտողներ տարբեր տեսանկյուններից են դիտարկում հանդեսների գիտական հոդվածների տարատեսակությունները: Այսպես՝ Գ. Կորսունսկայան հոդվածները տարբերակում է թեմատիկ-առարկայական հատկանիշներով[10]: Ահա՛ այդ հատկանիշները.

ա) հակիրճ հաղորդում, որը բովանդակում է գիտահետազոտական և կառուցողափորձնական արդյունքների շարադրանք.

բ) գիտատեխնիկական հոդված, որում շարադրվում են գիտահետազոտական և կառուցողափորձնական աշխատանքների արդյունքները՝ անցկացված հետազոտությունների հաղորդմամբ.

գ) գիտամեթոդական հոդված, որում մեկնվում է գիտական հետազոտությունների, փորձերի, չափումների մեթոդիկան.

դ) գիտապատմական հոդված, որում արտացոլված է առանձին գիտությունների զարգացման պատմությունը.

ե) տեսական հոդված, որում ցույց են տրվում տեսական հետազոտության արդյունքները՝ անցկացված գիտական վարկածների օրինաչափությունների և մշակումների բացահայտման համար. քննարկվող

[10] Տե՛ս **Г. Корсунская**, К типологии жанров // Вопросы грамматического строя языка: Сб. науч тр. / Моск. гос. пед. ин-т иностр. яз. им. М. Тореза, М., 1969 (11-14), էջ 11:

հոդված, որ բանավեճի բնույթ կրող արդիական հարցերի քննարկման նպատակ ունի:

Ժ. Վիտկովսկայան, իր դասակարգման հիմքում դնելով նույն չափանիշները, փոքր-ինչ այլ դասակարգում է առաջարկում՝ ա) բուն գիտական և տեխնոլոգիական հոդված, բ) հոդված-հաղորդում, գ) առաջնորդող հոդված, դ) ամփոփ-ակնարկային հոդված, ե) հաղորդումների հավաքածու-հոդված, զ) գովազդային հոդված[11]:

Ե. Տրոյանսկայան հոդվածների տարատեսակությունները սահմանում է ըստ դրանց բովանդակության[12]: Ահա՛ նրա խմբավորումը.

ա) հակիրճ հաղորդում, որը բովանդակում է գիտահետազոտական աշխատությունների և կառուցողափորձնական աշխատանքների արդյունքների սեղմ շարադրանքը.

բ) գիտատեխնիկական հոդված, որում մեկնաբանվում են գիտահետազոտական աշխատությունների հիմնական արդյունքները և ընդգրկվում են անցկացված հետազոտությունների ընհանրացումները.

գ) գիտամեթոդական հոդված, որտեղ շարադրվում է գիտական հետազոտությունների, փորձերի, չափումների մեթոդիկան.

դ) գիտապատմական հոդված, որտեղ արտացոլվում է գիտության առանձին փուլերի զարգացման պատմությունը.

ե) տեսական հոդված, որի նպատակն է ցույց տալ տեսական հետազոտությունների արդյունքները՝ բացահայտելու համար գիտական վարկածների մշակման օրինաչափությունները.

զ) բանավիճային հոդված, որի նպատակն է արդիական հարցերի քննարկումը.

է) գովազդային հոդված:

Լ. Կրուչինինան և Ա. Ստրիժենկոն գիտական հանդեսի հոդվածը դիտարկում են որպես հաղորդակցական արդյունավետ միավոր, որի

[11] Տե՛ս **Ж. Витковская**, Источники информации и отбор текстов по специальности для обучения чтению на иностранном языке в неязыковом вузе // МГПИИЯ им. М. Тореза, М., 1981, Вып. 183 (33-43), էջ 40:

[12] Տե՛ս **Е. Троянская**, անդ, էջ 193:

գերիշխող հատկանիշը տեքստում համախմբվածությունն է[13]: Հեղինակներն առանձնացնում են իմաստային և հորինվածքային համախմբվածություն: Իմաստային համախմբվածությունն իրացվում է ի հաշիվ տեքստի բովանդակային կարգերի փոխազդեցության և «լցվում» է բովանդակային իրազեկություն: Հորինվածքային համախմբվածությունը կատարում է հատութավորման գործառույթ, ընդ որում հաստատվում է տեքստի բաղադրիչների շարժման հստակ կարգ, որը համապատասխանեցվում է գիտական հետազոտության փուլերին.

ա) խնդրի առաջադրում՝ հարցի պատմության շարադրմամբ, և հետազոտության առարկայի ու մեթոդի ընտրություն.

բ) հետազոտության ընթացքի նկարագրություն, փաստերի փորձարկային կամ տեսական մեկնաբանություն.

գ) անցկացվող հետազոտության մեկնաբանություն և գիտական աշխատության արդյունքների ու հիմնական դրույթների եզրահանգումային ձևակերպում:

Դասագրքի ժանրի լեզվառճական առանձնահատկությունները: Պետք է նկատել, որ դեռևս բավարար չափով տեղորոշված չէ դասագիրքը գրական լեզվի գործառական տարատեսակ ոճերի ու ժանրերի մեջ: Համենայն դեպս մի ընդհանուր գիծ նշմարվում է գրեթե բոլոր հետազոտողների հայացքներում, այն է՝ դասագիրքը, ունենալով գիտականության անհրաժեշտ բաղադրիչներ, չի կարող մաքուր գիտական ժանր համարվել: Այդ նույն հիմունքով է, օրինակ, Դ Օլսոն դասագիրքը առանձին շերտ համարում հաղորդակցության իրադրության և լեզվական փոխազդեցությունների համակարգում[14]: Իսկ, ահա, Ջ. Սվեյլզը դասագիրքը համարում է խառնածին (հիբրիդային) ժանր[15]:

---

[13] Տե՛ս **Л. Кручинина**, А. Стриженко, Об особенностях организации текстов, относящихся к разным функциональным стилям, Иркутск, 1985 (174), էջ 70:

[14] Տե՛ս **D. Olson**, On the Language and Authority of Textbooks (in Literacy and the Future of Print) // J. of Commun. 1980? Vol. 30, № 1, (186-196), էջ 188:

[15] Տե՛ս **J. Swales**, The Role of the Textbook in EAP Writing Research // English for Specific Purposes, 1955, Vol. 14, №1 (3-18), 8:

Դասագրքային ժանրի համար Վ. Ստրախովան առանձնացնում է այն բնութագծերը, որոնցով միավորվում են դասագիրքն ու գիտական գրականությունը, և այն ինքնատիպ գծերը, որոնք բնորոշ են ուսումնական գրականությանը[16]: Ընդհանուր գծերն են շարադրման համակարգայնությունը, կապակցվածությունը, կառուցվածքի տրամաբանականությունը, տերմինների կիրառության մենիմաստությունը, շարահյուսական կառույցների բարդությունը, հաղորդման գործառույթի առկայությունը: Առանձնահատկությունների մեջ Վ. Ստրախովան նշում է հետևյալները.

ա) ուսումնական տեքստը չունի ինքնուրույն գիտահիրազեկային արժեք.

բ) ուսումնական տեքստով հասցեատերը (ընթերցողը) ոչ թե ծանոթանում է գիտության նորույթներին, այլ այս կամ այն գիտակարգի՝ հաստատում գտած հիմունքներին.

գ) ուսումնական տեքստը բնութագրվում է շարադրանքի հատուկ առարկայացվածությամբ.

դ) ուսումնական տեքստն աչքի է զարնում դիդակտիկական կառուցվածքով.

ե) ուսումնական տեքստն ունի իրազեկման համակենտրոն ձև.

զ) ուսումնական տեքստը բովանդակում է իրազեկային և հիմնավորված բնույթի նյութ[17]:

Ուսումնական տեքստի հաջողության ապահովման պայմաններից մեկը առաքողի կանխենթադրույթն է հասցեատիրոջ հիմներանգային (ֆոնային) իմացության վերաբերյալ[18]:

Գիտահանրամատչելի ժանրի լեզվառճական առանձնահատկությունները: Գիտահանրամատչելի տեքստի կարգավիճակը տարբեր մասնագետներ տարբեր կերպ են սահմանում:

---

[16] Տե՛ս **В. Страхова**, Сопоставительная прагматика учебного текста (на материале учебников естественно-научного цикла на английском и русском языках): Дис. канд. филол. наук, Воронеж, 1994 (214), էջ 11:

[17] Տե՛ս անդ:

[18] Անդ, էջ 17:

Ռ. Բուդագովը չի ընդունում գիտական ոճի տրոհումը գիտատեխնիկական, գիտահրապարակախոսական և գիտահանրամատչելի խմբերի։ Ըստ նրա՝ գիտական և գիտահանրամատչելի շարադրանքների տարբերությունը զուտ քանակային բնույթ ունի, և այդ տարբերությունը չի կարող խախտել գիտական ոճի ընդհանուր հասկացությունը[19]։

Ն. Մաևսկին տալիս է գիտահանրամատչելի գրականության մանրակրկիտ նկարագրություն՝ հիմնված նրա արտալեզվական իրողությունների վերլուծության վրա[20]։ Գիտահանրամատչելի գրականության նպատակը արժանահավատ գիտելիքների տարածումն է ոչ մասնագետների շրջանում։ Գիտահանրամատչելի գրականությունն ունի վառ ընդգծված մանկավարժական նպատակներ ու խնդիրներ։ Այդ գրականության բովանդակության արտալեզվական գործոնների գերիշխող ոճական գծերն են՝

ա) գիտականությունը,

բ) օբյեկտիվությունը,

գ) տրամաբանականությունը,

դ) վերացականությունը,

ե) ճշգրտությունը,

զ) հակիրճությունը,

է) արժանահավատությունը։

Գիտահանրամատչելի գրքերում հեղինակի անհատականությունն անհամեմատ վառ է դրսևորվում, քան զուտ գիտական գրքերում։ Գիտահանրամատչելի շարադրանքի հասանելիությունը (ոճական հիմնական հատկանիշը) որոշվում է ընթերցողի գործոնով։ Գիտահանրամատչելի ոճի լեզվաբանական հիմքը միջոճային բաղարկությունն է[21]։

Ն. Ռազինկինան գիտահանրամատչելի գրականության հիմնական գծերն է համարում հետևյալ պահերը.

---

[19] Տե՛ս **Р. Будагов**, Литературные языки и языковые стили, М., 1967 (376), էջ 75։

[20] Տե՛ս **Н. Маевский**, Особенности научно-популярного стиля: Автореф. дис. канд. филол. наук, Ростов н/д, 1979 (25)։

[21] Տե՛ս անդ։

ա) բուն գիտական տեքստի համեմատ՝ գիտահանրամատչելի տեքստի թեմատիկ նեղությունը.

բ) գիտահանրամատչելի տեքստում գիտական պրպտումների պատրաստի արդյունքի ցուցադրումը և, սրա հետ կապված, տրամաբանական ապացուցման ու փաստարկման մասերի նպատակադիր բացթողումը.

գ) նշված արդյունքի ներկայացումը մասնագիտական տերմինների ու տերմինաբանական բառակապակցությունների նվազագույն քանակով՝ պատմողականությունը (չխուսափելով խոսակցական բառապաշարի տարրերից) դարձնելով միաժամանակ և՛ մատչելի, և՛ հետաքրքրաշարժ[22]:

Ա. Նազարենկոն արտալեզվական հանրամատչելիության նպատակի ձգտումն ապահովող գործոններ է համարում ընթերցողի հետաքրքրասիրության ընկալման ու խթանման արդյունավետացումը[23]: Շարութաբանական միավորների ամենից հաճախադեպ տիպերի գործառության առանձնահատկությունների վերլուծության հիման վրա նա հանգել է գիտահանրամատչելի գրականության հաղորդման և ներգործման գործառույթների իրացման հետևյալ եզրակացության. «Գիտահանրամատչելի շարադրանքը բնութագրվում է հաղորդման և ներգործման տարրերի լայն կիրառությամբ, որոնց հարաբերակցությունը փոխվում է՝ կախված հաղորդակցման ուղղվածությունից, տվյալ ոլորտի ընթերցողի «իրազեկվածության» մակարդակից, դեպի որը կողմնորոշված է գիտահանրամատչելի գրականությունը: Ըստ այդ մակարդակի բարձրացման՝ ներգործման տարրի բաժնեչափը նվազում է, իսկ հաղորդման տարրի բաժնեչափը՝ աճում»[24]:

[22] Տե՛ս **Н. Разинкина**, Функциональная стилистика, М., 1989, (182), էջ 126:

[23] Տե՛ս **А. Назаренко**, Соотношение функций сообщения и воздействия в научно-популярной литературе (на материале английского языка): Дис. канд. филол. наук, М., 1985 (176), էջ 9:

[24] Անդ, էջ 9-10:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ որքան էլ տարակարծությունները շատ թվան գիտական տեքստի ժանրային տարբերակման խնդրի շուրջ, այնուամենայնիվ փաստն այն է, որ կա տեքստի, տվյալ դեպքում՝ գործառական ոճին պատկանող տեքստի ներքին տեսակավորման անհրաժեշտություն։ Հենց այդ անհրաժեշտության գիտակցումն է, որ ընդհանրական է բոլոր ուսումնասիրողների համար, և ընկալման ու մեկնաբանության ոչ քիչ հատվածներում հատվում են հետազոտողների հայեցակետերը՝ հաճախ միավորվելով ու նույնանալով։ Այդ ընդհանրությունն է, որ հետազոտողների զգալի մասին հանգեցրել է գիտական խոսքի ժանրային եռաստիճան տարբերակմանը՝ իրենց առանձնահատկություններով ու ընդհանրություններով։ Քանի որ գիտական ոլորտի ժանրային բաժանման հիմքում գիտականությունն է, մենք այս ոլորտի ժանրային եռաստիճանությունն առաջարկում ենք փոխարինել փոքր-ինչ այլ աստիճանականությամբ՝ հիմնվելով խմբավորման ներառական սկզբունքի վրա, այն է՝ գիտական ոլորտի ժանրերն առաջնայնորեն բաժանում ենք **զուտ գիտական** և **գիտականամերձ** տիպերի, ապա՝ վերջինս՝ **դասագրքային** և **գիտահանրամատչելի** ժանրերի։ Կաղապարման եղանակով ասվածը կարող ենք ներկայացնել հետևյալ կերպ.

ԳԻՏԱԿԱՆ ՈՃ ⊃ {ԶՈՒՏ ԳԻՏԱԿԱՆ ԺԱՆՐ ∪ ԳԻՏԱԿԱՆԱՄԵՐՁ ԺԱՆՐԵՐ},

ԳԻՏԱԿԱՆԱՄԵՐՁ ԺԱՆՐԵՐ ⊃ {ԴԱՍԱԳՐՔԱՅԻՆ ԺԱՆՐ ∪ ԳԻՏԱՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԺԱՆՐ},

որտեղ ⊃ - ընդգրկման նշանն է, իսկ ∪ – միավորման նշանը։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Olson D., On the Language and Authority of Textbooks (in Literacy and the Future of Print) // J. of Commun. 1980? Vol. 30, № 1, (186-196).
2. Swales J., The Role of the Textbook in EAP Writing Research // English for Specific Purposes, 1955, Vol. 14, №1 (3-18).

3. Будагов Р,, Литературные языки и языковые стили, М., 1967 (376).
4. Васильев Ю., Некоторые вопросы языково-стилистического анализа практических форм научной речи (на материале современной научно-технической статьи) // Язык и стиль научной литературы: Теоретические и прикладные проблемы, М., 1977 (47-64).
5. Витковская Ж., Источники информации и отбор текстов по специальности для обучения чтению на иностранном языке в неязыковом вузе // МГПИИЯ им. М. Тореза, М., 1981, Вып. 183 (33-43).
6. Корсунская Г., К типологии жанров // Вопросы грамматического строя языка: Сб. науч тр. / Моск. гос. пед. ин-т иностр. яз. им. М. Тореза, М., 1969 (11-14).
7. Кручинина Л., Стриженко А., Об особенностях организации текстов, относящихся к разным функциональным стилям, Иркутск, 1985 (174).
8. Маевский Н., Особенности научно-популярного стиля: Автореф. дис. канд. филол. наук, Ростов н/д, 1979, (25).
9. Мальчевская Т., Специфика научных текстов и принципы их классификации (на материале английских биологических текстов) // Особенности стиля научного изложения, М., 1976 (104-116).
10. Назаренко А., Соотношение функций сообщения и воздействия в научно-популярной литературе (на материале английского языка): Дис. канд. филол. наук, М., 1985 (176).
11. Разинкина Н., Некоторые общие проблемы изучения функционально-речевого стиля // Особенности стиля научного изложения: Сб. ст., М., 1976 (83-103).
12. Разинкина Н., Функциональная стилистика, М., 1989, (182).
13. Садыкова Л., Композиционно-стилевые параметры текста эссе // Лингвистические закономерности организации текста: Сб. науч. тр. / моск. гос. лингв. ун-т, М., 1991, Вып. 379, (11-19).
14. Страхова В., Сопоставительная прагматика учебного текста (на материале учебников естественно-научного цикла на английском и русском языках): Дис. канд. филол. наук, Воронеж, 1994 (214).
15. Троянская Е., Особенности жанров научной литературы и отбор текстов на различных этапах обучения научных работников иностранному языку // Функциональные стили. Лингвометодические аспекты. М., 1985.
16. Хованская З., Стилистика французского языка: Учебник для ин-тов и фак. иностр. яз, М., 1984 (344).

Բաղդասարյան Հ.
Երևանի պետական համալսարան

ԼԵԶՎԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՐՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

ABSTRACT
ON SOME PROBLEMS OF CORRELATION OF LINGUISTIC UNIVERSALS AND TRANSLATION

The article examines the correlation problems of linguistic universals and translation interpreted in different ways. According to Sapir-Whorf's linguistic relativity hypothesis, culture is determined by language peculiarities inherent in any language, which presuppose untranslatability. Meanwhile the theories opposing this definition accept the existence of the universal structure of the language – hence its translatability. E. Nida and Ch. Taber relying on the ideas of transformational grammar theory proposed the transformational model of translation which nowadays is viewed more as a translation technique than a theory.

Key words: *translatability, untranslatability, theory of linguistic relativity, universals, transformational model of translation*

РЕЗЮМЕ
О НЕКОТОРЫХ ПРОБЛЕМАХ СООТНОШЕНИЯ ЯЗЫКОВЫХ УНИВЕРСАЛИЙ И ПЕРЕВОДА

В данной статье рассматривается проблема взаимоотношения языковых универсалий и перевода, которая в переводоведении толкуется поразному. Согласно гипотезе Сепира-Уорфа о лингвистической относительности, культура определяется особенностями рассматриваемого языка, что и предполагает в некоторых случаях непереводимость. Между тем, в теориях, опровергающих данную точку зрения, выдвигается гипотеза о существовании всеобщей структуры языка, а следовательно – возможность её перевода. Ю. Найда и Ч. Табер, основываясь на идеях трансформа-

ционной грамматики, выдвинули модель трансформационного перевода, которая на сегодняшний день рассматривается скорее как техника, нежели теория перевода.

Ключевые слова: *переводимость, непереводимость, теория лингвистической относительности, трансформационная модель перевода*

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածում քննվում է լեզվական ընդհանրույթների և թարգմանության փոխառնչությունների խնդիրը, որը թարգմանաբանության մեջ մեկնաբանվել է տարբեր ձևով: Ըստ Սեպիր–Ուորֆի լեզվաբանական հարաբերականության վարկածի՝ մշակույթը որոշվում է տվյալ լեզվի առանձնահատկություններով, որն էլ ենթադրում է նաև անթարգմանելիություն: Մինչդեռ այս դետերմինիզմին հակադրվող տեսությունները ընդունում են լեզվի համընդհանուր կառուցվածքի գոյության, հետևաբար և թարգմանելիության հնարավորությունը: Յու. Նայդան և Չ. Տաբերը, հիմնվելով փոխակերպական քերականության գաղափարների վրա, առաջադրել են թարգմանության փոխակերպական կաղապարը, որն այսօր ավելի շատ դիտարկվում է որպես թարգմանչական հնար, քան տեսություն:

Բանալի բառեր՝ *թարգմանելիություն, անթարգմանելիություն, լեզվաբանական հարաբերականության տեսություն, ընդհանրույթներ, թարգմանության փոխակերպական կաղապար*

Կառուցվածքային լեզվաբանությունը կարևոր ուղենիշ է 20-րդ դարի լեզվաբանության զարգացման մեջ: Նրա ի հայտ գալուց ի վեր փոխվում է նաև տիպաբանության՝ որպես լեզվի մասին ուրույն գիտության դերը, քանզի կառուցվածքային լեզվաբանությունը, առաջադրելով լեզվական համակարգի ուսումնասիրության նոր մոտեցումներ ու մեթոդներ, հնարավորություն ընձեռեց ստեղծելու մի միասնական հենք լեզուների համեմատական-տիպաբանական ուսումնասիրության համար՝ լեզուն դիտարկելով իբրև որոշակիորեն համակարգված մի կառուցվածք: Մեծ հետաքրքրություն է առաջանում նաև լեզվական ընդհանրույթների խնդրի, առհասարակ համընդհանուր քերականության

նկատմամբ, և աստիճանաբար լեզվաբանական ունիվերսալիզմը դառնում է արդի լեզվաբանության ուսումնասիրության կարևոր խնդիրներից մեկը: Ինչպես լեզվի տիպաբանության և լեզվաբանական ունիվերսալիզմի, այդպես էլ սերող փոխակերպական քերականության քննության առարկան են դառնում լեզվի գոյաբանության, ինչպես նաև լեզվի և մտածողության փոխհարաբերակցության տարբեր հարցեր:

Այսօր ակնհայտ է լեզվական երևույթների ուսումնասիրության հարացույցի որակական փոփոխություն, որը պայմանավորված է նոր գաղափարների, վերլուծության նոր մեթոդների համադրությամբ, որոնք մշակվել են լեզվի փիլիսոփայության և այլ լեզվաբանական ուսմունքների և ուղղությունների հետազոտական պրակտիկայում՝ կանխանշելով արդի լեզվաբանության միջգիտակարգային բնույթը: Այս փոփոխությունների համատեքստում հետաքրքիր է նաև քննել լեզվական ընդհանրույթների և թարգմանության փոխառնչությունների խնդիրը, որը թարգմանաբանության մեջ մեկնաբանվել է տարբեր ձևով:

Ըստ Սեպիր–Ուորֆի լեզվաբանական հարաբերականության վարկածի՝ մշակույթը որոշվում է տվյալ լեզվի առանձնահատկություններով, որն էլ ենթադրում է նաև անթարգմանելիություն: Մինչդեռ այս դետերմինիզմին հակադրվող տեսությունները ընդունում են լեզվի համընդհանուր կառուցվածքի գոյության, հետևաբար և թարգմանելիության հնարավորությունը:

Լեզվի փիլիսոփայության տեսանկյունից այս խնդիրը քննության առարկա է դարձել Ջ. Սթայների «Բաբելոնից հետո» գրքում: Ըստ ընդհանրույթների տեսության՝ լեզուների հիմքում ընկած կառուցվածքը համընդհանուր է, իսկ լեզուների միջև առկա տարբերությունները՝ մակերեսային: Եվ ինչքան էլ եզակի լինեն այդ մակերեսային կառուցվածքները, այնուամենայնիվ, տարբեր լեզուներում առկա են ծագումնաբանական, պատմական և սոցիալական ընդհանրույթներ, որոնցից սկիզբ են առնում բոլոր քերականությունները: Այս տեսանկյունից, ըստ Ջ.Սթայների դիրքորոշման, թարգմանել նշանակում է հաղթահարել լեզուների միջև առկա մակերեսային անհամապատասխանությունները՝

ակներև դարձնելով նրանց հիմնական գոյաբանական սկզբունքները, որոնք համընդհանուր են այդ լեզուներին: Իսկ ըստ հակառակ դիրքորոշման՝ «մոնադիստական»[1] տեսության (teoría monadista)՝ այն ինչ թարգմանություն ենք անվանում, ընդամենը «մոտավոր անալոգիաների մի պայմանական միասնություն է», վերարտադրման՝ հազիվ հանդուրժելի ուրվագիծ, երբ խոսքը որևէ ազգակցություն ունեցող լեզուների և մշակույթների մասին է, բայց դա կեղծ է և ոչ իրական, երբ խոսքը ոչ մերձավոր և տարբեր լեզուների մասին է (Steiner, 1980:95-96): Ըստ Սթայների՝ այս երկու բևեռների միջև առկա է միջանկյալ դիրքորոշումների մի ամբողջ շղթա, ընդ որում՝ հազվադեպ դեպքերում է, որ այդ դիրքորոշումներից որևէ մեկը պահպանվում է բացահայտ խստապահանջությամբ: Թարգմանելիության և անթարգմանելիության խնդիրների քննության տեսանկյունից շատ կարևոր են նաև գերմանացի հայտնի լեզվաբան և փիլիսոփա Վ. ֆոն Հումբոլդտի գաղափարները, որը հարաբերակցություն է ստեղծում մարդկային փորձի և լեզվի միջև: Նա ի ցույց է դնում այն համապատասխանությունները, որ առկա են տվյալ ժողովրդի աշխարհընկալման և նրա մշակույթի միջև՝ լեզուն համարելով ճանաչողության միակ ճշմարիտ կառույց (Амирова; Ольховиков; Рождественский, 1975): Ամեն մի լեզու, ըստ Հումբոլդտի, պարփակում է որոշակի աշխարհայացք, ընդ որում՝ լեզուն կապող օղակ է մարդու և շրջակա աշխարհի միջև: Մեր քննվող նյութի տեսանկյունից հետաքրքիր են նաև Հումբոլդտի տիպաբանական-ընդհանրական գաղափարները: Բոլոր լեզուների ձևերը, ըստ նրա, կարող են հանգել մի ընդհանուր ձևի, եթե նկատի առնենք նրանց առավել ընդհանուր գծերը: Ըստ Հումբոլդտի՝ «-Լեզվի անհատական բնույթը, եթե այն դիտարկենք սովորական իմաստով, դա հարաբերական անհատականություն է՝ միայն այլ լեզուների հետ համեմատությամբ» (Амирова; Ольховиков; Рождественский, 1975:348): Արդյո՞ք մենք լեզուն կուսումնասիրենք ընդհանրապես, թե կքննենք գոյություն ունեցող լեզուները, միշտ այնտեղ, ըստ նրա, կգտ-

[1] Մոնադիզմը ծագում է Լայբնիցի փիլիսոփայությունից, որտեղ մոնադները անտարածական և անտրոհելի գոյացություններ են, որոնցից կազմված է տիեզերքը:

նենք մեկը մյուսից տարբեր սկիզբ՝ հնչյունական ձևը և նրա օգտագործումը առարկաները անվանելու և մտքերը կապակցելու համար: Այդ գործածությունը հիմնվում է մտածողության պահանջների վրա, որը հիմք է բոլոր լեզուներում առկա ընդհանուր օրենքների համար: Մտածողության պահանջները և լեզվի ընդհանուր օրենքները կախում չունեն ժողովուրդների և ազգությունների տարբերություններից: Իսկ ազգային առանձնահատկություններից են կախված, թե ինչպես են կոնկրետ լեզուներում իրացվում մտածողության այդ պահանջները և լեզվի ընդհանուր օրենքները: Կարելի է եզրակացնել, որ գործածման անհատականությունը հիմնվում է ելակետային սկզբունքների ընդհանրության վրա:

Ըստ Հումբոլդտի՝ լեզուն ոչ միայն ժողովրդի ստեղծագործության, այլ նաև առանձին անձանց ստեղծագործության արդյունք է, քանի որ լեզուն վերարտադրվում է և գոյատևում առանձին անձանց շնորհիվ: Սրանում դրսևորվում է լեզվում կոլեկտիվի (համընդհանուրի) և անհատականի անտինոմիան (հակադրությունը): Լեզուն միշտ ունի ազգային ձև և տվյալ ազգի խոսքային գործունեության արդյունքն է: Լեզվական ավանդույթի հետ մեկտեղ յուրաքանչյուր ոք և յուրաքանչյուր սերունդ իր անհատական և կոլեկտիվ լեզվական-ստեղծագործական գործընթացում ազդում է լեզվի վրա և ներմուծում նոր տարրեր: Սրանում դրսևորվում է մի այլ փոխադարձ կապ՝ անհրաժեշտության և ազատության անտինոմիան լեզվում, այլ կերպ ասած՝ անհատական լեզվական-ստեղծագործական գործընթացը սահմանափակող լեզվական ավանդույթը և լեզվի կրողի ազդեցությունը տվյալ հասարակության լեզվական կյանքի վրա: Նշված անտինոմիայի հետ սերտորեն հարաբերակցվում է նաև Հումբոլդտի կողմից առաջադրված մի այլ՝ լեզվում կայունության և շարժման անտինոմիան: Խոսելով լեզվի ձևի մասին՝ Հումբոլդտը առանձնացնում է ներքին ձևը՝ ի տարբերություն արտաքին ձևի, այսինքն՝ հնչյունական կազմության, ձևաբանական կառուցվածքի և իմաստի: Ներքին ձևը լեզվում մտածողության առարկայացման միջոցն է, «ժողովրդի ոգու» արտահայտությունը: Ժողովրդի ոգու և լեզվի նույնականության գաղափարը Հումբոլդտի լեզվաբանական ուսմունքի

առանցքային հասկացություններից է. լեզուն տվյալ ժողովրդի շուրջ շրջանակ է կազմում, որից կարելի է դուրս գալ միայն մտնելով մեկ այլ լեզվի շրջանակ:

Հումբոլդտի գաղափարները ընդհանուր առմամբ «մոնադիստական» են, և նա լեզվաբանական հարաբերականության՝ ռելատիվիզմի կողմնակից է, թեև նրա տեսության մեջ ակներև է նաև «համընդհանրական միտումը» (Steiner, 1980:107): Հումբոլդտը, որը Սեպիր-Ուորֆի վարկածի նախահայրն է համարվում, դիմում է թարգմանությանը՝ հաստատելու այն գաղափարը, որ ամեն մի լեզու ինչքան էլ «հասարակ» լինի, կարող է արտահայտել ցանկացած միտք կամ գաղափար առավել կամ նվազ դժվարությամբ:

Հյուսիսամերիկյան լեզվաբանության մեջ ռելատիվիզմը հիմնվում է ինչպես Հումբոլդտի ժառանգության, այնպես էլ տարբեր մարդաբանների աշխատանքների վրա:

Ամերիկյան բնիկների մշակույթի ուսումնասիրությունը հաստատում է Հումբոլդտի վարկածը լեզվական դետերմինիզմի, ինչպես նաև Տրիերի «իմաստային դաշտերի» հայեցակետի վերաբերյալ:

Սեպիրը առաջ է քաշում լեզվաբանական հարաբերականության գաղափարը, որի դրույթներն արմատավորվում են Ուորֆի աշխատություններում: Նա խոսում է արմատապես տարբեր աշխարհի պատկերների, մտածողության տարբեր ձևերի մասին, որոնք մի «միկրոտիեզերք» են, որ յուրաքանչյուր ոք կրում է իր մեջ և որի միջոցով գնահատում և հասկանում է «մակրոտիեզերքը»: Մարդկային գիտակցության համար գոյություն չունի «համընդհանուր օբյեկտիվ՝ ֆիզիկական իրականություն», «մենք մասնատում ենք իրականությունը՝ ելնելով այն ուղենիշներից, որ թելադրում է մեր մայրենի լեզուն»: Իր «Լեզու, մտածողություն և իրականություն» գրքում Ուորֆը նշում է, որ մտածելը ծայր աստիճան խորհրդավոր մի բան է, և այդ գործունեությունը լուսաբանելու ակունքները գալիս են լեզվի ուսումնասիրություններից: Այդ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տվյալ անձի մտածողության ձևերը վերահսկվում են կաղապարների անխուսափելի օրենքներով, որոնք նա չի գիտակցում (Whorf, 1956: 283):

Եթե, ինչպես պնդում են Հումբոլդտը, Սեպիր-Ուորֆը, լեզուները ստեղծում են իրականության էապես տարբեր «աշխարհներ», ապա ինչպե՞ս է կատարվում հաղորդակցությունը տարբեր լեզուներով խոսող անձանց միջև, ինչպե՞ս են մարդիկ յուրացնում օտար լեզուներ կամ կատարում թարգմանություններ:

Այն էմպիրիկ համոզմունքը, որ միտքը հաղորդակցվում է՝ հաղթահարելով լեզվական պատնեշներ, համարվում է լեզվի համընդհանուր տեսության առանցքը: Լեզուների տարբերությունների հետևում առկա են միասնության, համաձայնության, ձևական կառուցվածքների համընդհանրության սկզբունքները, որոնք բնութագրում են մարդկային լեզվի էությունը: Մեր օրերում համընդհանուր քերականության վարկածը ընդունվում է գրեթե բոլոր լեզվաբանների կողմից, թեև խնդիրը այլ ձևով է առաջադրվում. լեզվի կառուցվածքի ո՞ր մակարդակում պետք է փնտրել և նկարագրել լեզվական ընդհանրույթները:

Համընդհանուր՝ «հիմնարար» քերականության փնտրտուքը մարդկության վերլուծական մտածողության պատմության ամենահետաքրքրքիր էջերից մեկն է: Իր համընդհանուր քերականության տեսության մեջ Չոմսկին առաջադրում է այն միտքը, որ մարդկային բոլոր լեզուները հիմնվում են ընդհանուր կառուցվածքային հենքի վրա, իսկ երեխաները ունեն լեզուները յուրացնելու ի ծնե տրված ունակություններ: Չոմսկու գաղափարները մեծ ազդեցություն են թողել նաև արդի թարգմանաբանության վրա:

Յու. Նայդան և Չ. Տաբերը, հիմնվելով փոխակերպական քերականության գաղափարների վրա՝ առաջադրել են թարգմանության փոխակերպական կաղապարը (Nida, 1986): Այս կաղապարի լեզվական նախադրյալն այն դրույթն է, որ ամեն մի լեզվի հիմքում ընկած է շարահյուսական պարզագույն տիպի նախադասությունների՝ միջուկային կառույցների սահմանափակ բազմություն, և որ տարբեր լեզուներ իրար նման են ավելի շատ պարզագույն, քան բարդ կառույցներով: Ելնելով այդ դրույթից՝ թարգմանության փոխակերպական կաղապարի հեղինակները ելակետային տեքստի բարդ կառույցներն ըմբռնելիս կամ

նրանց համապատասխանությունները թարգմանող լեզվում որոնելիս դժվարությունների հանդիպող թարգմանչին խորհուրդ են տալիս դրանք «սեղմելով վերածել» պարզագույն, միջուկային կառույցների, այնուհետև միայն դրանց համապատասխանությունները փնտրել թարգմանող լեզվի պարզ կառույցների մակարդակում: Ընդ որում՝ թարգմանության գործընթացում առանձնացվում են երեք փուլ՝ վերլուծություն, փոխանցում և վերականգնում:

Իհարկե, փոխակերպական կաղապարի դերն անվիճելի է այն դեպքերում, երբ թարգմանիչը դժվարությունների է հանդիպում ելակետային տեքստի նախադասությունների իմաստն ըմբռնելիս և/կամ թարգմանող լեզվում դրանց համապատասխանությունները որոնելիս: Մյուս դեպքերում նման աշխատատար գործողություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում: Բացի այդ, այս կաղապարը բազմակողմանիորեն չի արտացոլում թարգմանության գործընթացը, քանի որ սահմանափակվում է սոսկ լեզվական իմաստների մակարդակով: Ինչպես արդարացիորեն նշում է Զ. Դ. Լվովսկայան, «փոխակերպական կաղապարը որոշ դեպքերում կարող է շատ օգտակար լինել, սակայն ավելի շուտ որպես թարգմանչական հնար, քան տեսություն» (Львовская, 1985:49):

Այսպիսով, ընդհանուր տրամաբանական-հասկացական բազան, լեզվական ընդհանրույթների ամբողջությունը կազմում է լեզվի բովանդակային կառուցվածքի միջուկը: Այն մարդկային մտածողության անքակտելի բաղադրիչն է, կախում չունի լեզուների և մշակույթների առանձնահատկություններից, ունի համընդհանուր բնույթ և հնարավոր է դարձնում մարդկանց միջև փոխըմբռնումն ու հաղորդակցությունը, ինչպես նաև մի լեզվից մի այլ լեզու կատարվող թարգմանությունները: Սակայն այս համընդհանուր տրամաբանական-հասկացական նշակարգի զարգացումը, տեղայնացումն ու դրսևորումները յուրաքանչյուր լեզվամշակութային համայնքում կատարվում է յուրովի՝ մասնակիորեն բարդացնելով թարգմանության գործընթացը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Амирова Т. А.; Ольховиков Б. А.; Рождественский Ю. В.** (1975), Очерки по истории лингвистики. Москва: Наука.
2. **Львовская З. Д.** (1985), Теоретические проблемы перевода (на материале испанского языка). Москва: Высшая школа.
3. **Nida, E., Taber, Ch.** (1986), La traducción: teoría y práctica. Madrid: Ediciones Cristiandad.
4. **Steiner, G.** (1980), Después de Babel: Aspectos del lenguaje y la traducción (traducción de Adolfo Castañon). México: Fondo de Cultura económica.
5. **Whorf, B.** (1956), Lenguaje, pensamiento y realidad. Barcelona: Barral.

Բեքարյան Ն.
Երևանի պետական համալսարան

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՏԵՔՍՏԻ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆԳԼԵՐԵՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ

ABSTRACT
PRINCIPLES AND STRATEGIES OF ORGANIZING ANALYTICAL READING OF A LITERARY TEXT FOR FUTURE LINGUISTS

Analytical reading is aimed at revealing the basic meaning of the text. At the initial stage, the students analyze grammar, vocabulary, stylistic devices, cultural and other phenomena in the original text. At the next stage, they analyze linguistic, content and structural features of the text.

Analytical reading helps to achieve academic success and ensures social engagement. It consists of two key skills: definition of basic and secondary ideas, evaluation of the reliability of information contained in the text.

Analytical reading of the literary text forms analytical skills and reader competence of students, as well as their critical thinking.

***Key words**: literary text, analytical reading, principle, strategy, critical reading, original, background, cognitive, motiviation, need, information gap*

РЕЗЮМЕ
ПРИНЦИПЫ И СТРАТЕГИИ ОРГАНИЗАЦИИ АНАЛИТИЧЕСКОГО ЧТЕНИЯ ХУДОЖЕСТВЕННОГО ТЕКСТА ПРИ ОБУЧЕНИИ АНГЛИЙСКОМУ ЯЗЫКУ СУДЕНТОВ ЯЗЫКОВЫХ ФАКУЛЬТЕТОВ

Аналитическое чтение направлено на выявление основного смысла текста. На начальном этапе учащиеся анализируют грамматику, лексику, стилистические приемы, культурные и другие особенности аутентичного

текста. На следующем этапе они выявляют лингвистические, контентные и структурные особенности текста.

Аналитическое чтение направлено на достижение академического успеха и обеспечение социального участия студентов. Оно состоит из двух ключевых навыков:

а) определения основных и второстепенных идей; б) оценки достоверности информации, содержащейся в тексте.

Аналитическое чтение художественного текста формирует как читательскую компетентность учащихся, так и их критическое мышление.

Ключевые слова: *художественный текст, аналитическое чтение, принцип, стратегия, критическое чтение, оригинал, фон, когнитивный, мотивация, потребность, информационный пробел*

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ներկայացվում են գեղարվեստական տեքստի վերլուծական ընթերցանության կազմակերպման սկզբունքները և ռազմավարություններն անգլերենի մասնագիտական դասընթացում, բացահայտվում են դրանց բովանդակային ու գործառական կապը, ինչպես նաև քննադատական և վերլուծական ընթերցանության ընդհանրություններն ու տարբերությունները՝ ըստ ընթերցանության նպատակի, կազմակերպման փուլերի և կիրառվող ռազմավարությունների:

Բանալի բառեր՝ *գեղարվեստական տեքստ, վերլուծական ընթերցանություն, սկզբունք, ռազմավարություն, քննադատական ընթերցանություն, բնագիր, հանրամշակութային ֆոն, ճանաչողական դրդապատճառ, պահանջմունք, տեղեկատվական բաց*

Օտար լեզուների ուսուցման գործընթացում մեծ տեղ է հատկացվում ընթերցանությանը, քանի որ ընթերցման ունակություններն ավելի արագ են ձևավորվում՝ ի տարբերություն խոսելու, գրելու և ունկնդրելու կարողությունների: Անգլերենի մասնագիտական դասընթացում ուսանողն իրականացնում է գեղարվեստական տեքստի վերլուծական ընթերցանություն՝ հենվելով ոչ միայն իր մայրենի, այլև օտար լեզվով գեղարվեստական տեքստերի ընթերցանության վրա:

Հնարավոր չէ հստակեցնել գեղարվեստական բնագրերի ընթերցանության սկզբունքները՝ առանց որոշելու ընթերցանության ռազմավարությունները, որոնք նախորդ դարի 50-ականներից ենթարկվել են էական փոփոխությունների: Ըստ լեզվի ուսուցման մեթոդիկայի՝ ընթերցելիս հիմնականում կիրառում են երեք ռազմավարություն՝ հասկանալ թե՛ ընթերցածն ամբողջությամբ, թե՛ հիմնական բովանդակությունը և թե՛ տեքստի որոշ հատվածներ՝ ընտրությամբ:

Անգլերենի մասնագիտական դասընթացում վերլուծական ընթերցանության ծրագրերում խնդիր է դրվում ուսումնասիրել գործառական տարբեր ոճի տեքստեր՝ գործաբանական, գիտահրապարակախոսական, տեղեկատվական, գեղարվեստական և այլն: Նշված տեքստերի ներմուծման, ինչպես նաև դրանց յուրացման վերլուծությունը ցույց է տալիս, որ գեղարվեստական բնագրերը նպատակահարմար է ընթերցել ուսուցման բոլոր փուլերում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանք հետաքրքիր են, հարուստ՝ բառապաշարով, կարող են բավարարել ուսանողների ճանաչողական պահանջները: Կարևոր է նաև այն, որ դրանք բնագրային են և ի, տարբերություն ուսումնական տեքստերի, համապատասխան կրճատման, պարզեցման կամ հարմարման չեն ենթարկված: Ինչպես հայտնի է, ընդունված սկզբունքներով ցանկացած տեքստի դիդակտիկական մշակումը կարող է խախտել դրա կառուցվածքը, կազմը, արժանահավատությունը, ճշմարտացիությունը: Բնագրային գեղարվեստական տեքստը կամ բնագիրը պահպանում է իրական կոլորիտը, հանրամշակութային ֆոնը (Кучеренко 2009: 18-23):

Ակնհայտ է, որ գեղարվեստական բնագրերն ընթերցելիս թե՛ դասախոսները, թե՛ ուսանողները հաղթահարում են լեզվաբանական, հոգեբանական, մշակութային և այլ բնույթի բազում դժվարություններ: Դրանք նվազագույնի հասցնելու համար անհրաժեշտ է նախօրոք ընտրել այնպիսի բնագրեր, որոնք հետաքրքիր են, համապատասխանում են ուսանողների լեզվական մակարդակին, հաշվի են առնում նրանց ճանաչողական դրդապատճառներն ու հետաքրքրությունների շրջանակը: Մեթոդական մակարդակում խնդիր է դրվում նկատի ունենալ բնագրե-

րի ծավալը, դրանց ընթերցանությանը հատկացվող ժամանակը, մշակութային տեղեկատվության բովանդակությունը, պատմամշակութային հենքը: Եթե բնագիրը պարունակում է մշակութային, լեզվական մեծ քանակությամբ իրողություններ, ապա տեղեկատվական բացը (information gap) լրացնելու գործընթացն էլ ավելի է դժվարանում մտածելակերպի բացի (mind gap) հաղթահարմամբ (Collie and Slater 1990: 3):

Այսպիսով, խնդիր է դրվում վերլուծական ընթերցանության ուսուցման գործընթացում հստակեցնել գեղարվեստական տեքստի տեսակը, որը կարող է լինել դիդակտիկ, կիսաբնագրային, բնագրային և այլն: Բարիշնիկովը նկատում է, որ «անգլերենի մասնագիտական դասընթացում նախընտրելի են գեղարվեստական բնագրերը կամ բնագրային տեքստերը, քանի որ դրանք ստեղծված են լեզվակիրների կողմից լեզվակիրների համար» (Баришников 2003: 63): Ասվածից հետևում է, որ դրանք թեև իրականում չեն հետապնդում ուսուցողական նպատակներ, այնուամենայնիվ դրանց կիրառումն ուսուցման գործընթացը դարձնում են առավել հետաքրքիր, լեցուն և արդյունավետ:

Վերլուծական ընթերցանությունն ընթերցանության այն տեսակն է, որը միտված է տեքստի իմաստային բովանդակության բացահայտմանը: Այդ ընթացքում սովորողները փորձում են լեզվական ձևերի վերլուծությամբ ընկալել տեքստը՝ իր բոլոր մանրամասներով: Այս հանգամանքը հնարավորություն է ընձեռում ոչ միայն գիտակցել խոսքի մշակութային բաղադրիչները, այլ նաև բացահայտել դրանց կառուցվածքային-իմաստաբանական ու գործառական համապատասխանությունները և յուրացնել դրանք (Лесохина 2016: 67-78):

Ըստ վերոհիշյալ հեղինակի՝ վերլուծական ընթերցանությունը տեղի է ունենում երկու փուլով: Առաջինում սովորողները վերլուծում են բնագրում առկա քերականական նյութը, բառապաշարը, ոճական առանձնահատկությունները, մշակութային և այլ փաստերը, իսկ հաջորդում ուսումնասիրում են լեզվաբանական, բովանդակային տեղեկատվությունն ու կառուցվածքային առանձնահատկությունները: Ըստ այդմ՝ լեզվական բուհում ուսանողների վերլուծական և մեկնողական

գործունեության գործընթացում ընթերցանությունն ու, մասնավորապես վերլուծական ընթերցանությունը միտված են բացահայտելու գեղարվեստական բնագրի բուն իմաստը (*Мирошниченко* 2012: 314):

Դաֆը և Մալին առաջարկում են նաև գեղարվեստական բնագիրն ուսուցողական նպատակներով կիրառելու հստակ սկզբունքներ: Ըստ նրանց մոտեցման՝ ուսուցողական նպատակներով ընթերցվող գեղարվեստական բնագիրը պետք է հետաքրքրի ուսանողներին, համապատասխանի նրանց լեզվական մակարդակին: Նաև կարևորվում են ընթերցանությանը հատկացվող ճիշտ ժամաքանակը, ընտրությունը, ինչպես նաև այն, թե ուսանողները մշակութային կամ գրականագիտական հենքային ինչ գիտելիք ունեն (Duff and Maley 2007):

Վերլուծական ընթերցանության կազմակերպման կարևոր սկզբունք է նախաընթերցանական փուլի ճիշտ և հստակ կազմակերպումը: Դասավանդող ուսուցիչը կամ դասախոսը պետք է հստակորեն գիտակցի, թե ինչ ընթացակարգով է հարկավոր ներմուծել առաջադրվող թեման, տեքստը, բառապաշարը՝ զանց չառնելով ուսանողների առկա ֆոնային գիտելիքը, տարիքային առանձնահատկություններն ու հետաքրքրությունները: Տեղին է նշել, որ Փուլվերնեսը ևս կարևորում է ընթերցանությանը հատկացվող ժամաքանակի հստակեցումն ուսուցման բոլոր փուլերում (Pulverness 2003):

Գեղարվեստական բնագրերն օգնում են ուսանողին վերարտադրելու, մոդելավորելու լեզվակրին բնորոշ իրական հաղորդակցական իրադրություններ, քանի որ դրանք պարունակում են միջմշակութային բովանդակության կամ ուղղվածության տեղեկատվություն: Խնդիրն այն է, թե ինչպես ուսումնական, ուսումնախոսքային կամ ակադեմիական միջավայրում մի դասի կամ դասընթացի շրջանակներում, սահմանափակ ժամաքանակի պայմաններում ընտրել գեղարվեստական տեքստեր, որոնք, լինելով բնագրային, կնպաստեն հիմնախնդրային–իրական, խոսքային-հաղորդակցական տարբեր իրավիճակներ, իրադրություններ մոդելավորելուն՝ հաշվի առնելով անգլերենի ուսուցման նախնական, միջին և ավարտական փուլերը: Գեղարվեստական տեքստերը

բազմագործառույթ են: Դրանք ներկայացնում են լեզվակիրների աշխարհայացքը, արժեքային համակարգը, սեփական և թիրախային մշակույթների նկատմամբ վերաբերմունքը: «Բնագրային տեքստերը,- գրում է Վորոնկովան,- բազմազան խնդիրների քննարկման ժամանակ նպաստում են ոչ միայն ուսումնասիրվող լեզվի ու մշակույթի, այլև սեփական մշակույթի ինքնատիպությունը հասկանալուն և բացահայտելուն» (Воронкова 2004: 37-41):

Միքուլեքին ընթերցանության հիմնախնդիրը փորձում է լուծել ճանաչողական լեզվաբանության տեսանկյունից՝ նշելով, որ տեքստը հասկանալու համար սոսկ լեզվաբանական գիտելիքը բավարար չէ: Ընթերցողի սեփական լեզվական սխեմատան (ուրվագիծ-նմուշը - Schemata) ձևավորում են մշակույթը և անձնական փորձը, որն էլ ազդում է անգլերեն ընթերցվող տեքստերը կամ պարբերությունները հասկանալու և մեկնաբանելու համար (Mikulecky 2008): Սխեմայի տեսության համաձայն՝ տեքստի հասկանալը տեղի է ունենում ընթերցողների անցյալ փորձով ձեռք բերած անհատական սխեմատաների (Personal Schemata) ակտիվացման շնորհիվ: Ռ. Ս. Անդերսոնի կարծիքով՝ «նոր, ավելի զարգացած սխեմատան կազմավորվում է հին և նոր տեղեկատվությունների ինտեգրման արդյունքում» (Anderson, Pearson 1984): Յուրաքանչյուր մշակույթ ձևավորում է իր ուրույն սխեմատան, որը հիմնվում է մշակութային տարբեր պատկերացումների և հավատալիքների վրա: Ընթերցանությունը կարող է փոխել ընթերցողի սխեմատան, դրա արժեքներն ու ճանաչողական մոդուլը:

Վերլուծական ընթերցանության սկզբունքները և ռազմավարությունները դասակարգելիս անհրաժեշտ է հստակ սահմանել «քննադատական ընթերցանություն» (critical reading) հասկացությունը, քանի որ այն ենթադրում է ընթերցվող պարբերություններում արտահայտվող փաստարկների հավաստիության քննադատություն (Walz 2001): Քննադատաբար տեքստն ընթերցողը կարդում է տողերի արանքում և ձեռնարկում է վերլուծություն, որպեսզի ընկալի տեքստի լրիվ իմաստը: «Քննադատական ընթերցանություն» եզրույթը բազմիմաստ է և սահ-

մանվում է որպես ընթերցանություն, որը միտված է ակադեմիական հաջողության հասնելուն և, որպես ընթերցանություն, կոչված է սոցիալական ներգրավվածություն ապահովելուն» (Manarin, Carey, Rathburn, and Ryland 2015: 4):

Ըստ Մանարինի, Քըրեյի, Ռաթբըրնի և Ռայլանդի՝ «ակադեմիական հաջողության կամ ուսումնական նվաճումների համար նախատեսված քննադատական ընթերցանությունը բաղկացած է երկու առանցքային հմտությունից՝ 1. տարբերակել գլխավոր և երկրորդական գաղափարները, 2. գնահատել տեքստում առկա տեղեկատվության արժանահավատությունը» (Manarin, Carey, Rathburn, and Ryland 2015: 4):

Ընդհանուր առմամբ ընթերցանության ռազմավարությունների վերլուծությունը կարող է բացահայտել քննադատական և վերլուծական ընթերցանության հիմնական տարբերությունները: Սարիգը սահմանում է անգլերենը որպես երկրորդ օտար լեզվի ընթերցանության ռազմավարությունների հետևյալ տեղաշարժերը.

- տեխնիկական գործիքակազմը (թռուցիկ և մանրազնին ընթերցանություն),
- պարզեցում և կոնկրետացում (օրինակ՝ շրջասում և հոմանիշներ),
- համաձայնեցում (օրինակ՝ օգտագործել բովանդակությունը և ձևական սխեմատան),
- մշտադիտարկում (օրինակ՝ գիտակցաբար պլանավորում, ինքնագնահատում) (Sarig 1987: 110):

Վերլուծական ընթերցանության կազմակերպման գործընթացում առանձնանում են Սարիգի, Բլոքի և այլոց կողմից ընդունված քննադատական ընթերցման հետևյալ ռազմավարությունները.

- բնորոշել տեքստի կառուցվածքը,
- անցկացնել տեղեկատվական հարցում տեքստի շուրջ,
- մեկնաբանել տեքստը,
- օգնել ուսանողներին կիրառելու իրենց ընդհանուր գիտելիքները և կատարելու զուգորդումներ,

- մեկնաբանել գործող անձանց վարքագիծն ու գործողությունները,
- հետևել կամ ուղղորդել ընկալման գործընթացը,
- ընթերցել տեքստը:

Նշված ռազմավարությունները միտված են հեղինակի գաղափարները հասկանալուն: Բլոքն առանձնացնում է քննադատական ընթերցանության էքստենսիվ (հեղինակի գաղափարները հասկանալը) և ռեֆլեքսիվ (այդ գաղափարներին անձնապես արձագանքելը) մակարդակները (Block 1986): Ընթերցանության էքստենսիվ և ռեֆլեքսիվ եղանակները կարևոր են տեքստի առանցքային հասկացույթները ընկալելու, սեփական մեկնաբանությունն անդրադարձելու, ինչպես նաև որոշելու համար, թե ինչպես պետք է կիրառվի տեքստը:

Տարբերակելով տեքստի քննադատական ընթերցանության և տեքստը զուտ հասկանալու նպատակ հետապնդող ընթերցանության ռազմավարությունները մեթոդիստները՝ Բլոքը, Լարկինգը, Ուալլանսը, Ուոլցը և այլք (Block 1986, Larking 2015, Wallace 2003, Walz 2001 and others) հստակեցնում են վերլուծական ընթերցանության սկզբունքները: Համապատասխան համեմատությունը ցույց է տալիս, որ առաջինները վերաբերում են բնագրի հիմնական գաղափարները գնահատելուն, հասկանալուն, բացահայտելուն: Կարելի է առանձնացնել քննադատական ընթերցանության հետևյալ ռազմավարությունները.

1. տարբերակել գլխավոր և երկրորդական կամ հիմնավորող գաղափարները,
2. գնահատել պահանջների արժանահավատությունը,
3. տեքստի վերաբերյալ գալ համապատասխան եզրահանգումների,
4. տեքստի հիմնավորման առիթով հայտնել սեփական կարծիքը,
5. ներկայացնել հեղինակի հարցադրումները,
6. որոշել՝ ինչպես կարելի է տեքստը կիրառել սեփական ուսումնասիրություններում,
7. ճանաչել ոճական հնարները,

8. ներկայացնել միջանձնային հարաբերությունները,
9. գնահատել տեքստի որակը,
10. տարբերակել փաստը կարծիքից:

Գեղարվեստական բնագրի վերլուծական ընթերցանության ընթացկարգերը մշակելիս առաջին պլան են մղվում հասկանալու վրա հիմնված ընթերցողական ռազմավարությունները, որոնք Մ. Լարքինգը հիմնականում այսպես է ձևակերպում.

1. տալ նախնական տեղեկատվություն տեքստի մասին,
2. թռուցիկ ընթերցել տեքստը՝ ամբողջական գաղափարը հասկանալու համար,
3. բնորոշել տեքստի հիմնական և հարակից թեմաները,
4. տեղադրել տեքստերը՝ ըստ առաջադրված թեմաների,
5. կռահել անծանոթ բառերը ենթատեքստից,
6. մանրազնին ընթերցել տեքստը հատուկ տեղեկատվություն ստանալու նպատակով,
7. ինքնուրույն շրջասել տեքստի համապատասխան բաժինները,
8. արագ ընթերցել արտահայտություններն ու դարձվածքները, ոչ թե բառերը,
9. վերընթերցել տեքստը՝ այն ավելի լավ ըմբռնելու և յուրացնելու համար,
10. հասկանալ տեքստում առկա գաղափարների կապը՝ ներկայացնելով տեքստի կառուցվածքը (Larking 2017: 60):

Նշված ռազմավարությունները մշակելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն, որ գեղարվեստական բնագրի վերլուծական ընթերցանությունը հետապնդում է տարբեր նպատակներ, քանի որ այն ընկած է ոչ միայն տվյալ տեքստի տեղեկատվությունը հասկանալու, այլև այն թարգմանելու, մեկնաբանելու և, իհարկե, վերատադրելու հիմքում:

Գեղարվեստական տեքստի վերլուծական ընթերցանություն իրականացնելու համար ուսանողը պետք է կարողանա որոշել դրա գործառական ոճը, բացահայտել այնտեղ առկա խոսքային և ոճական հնարնե-

րը, բանադարձումներն ու դարձույթները (figures of speech and tropes), դարձվածքային միավորները:

Գեղարվեստական տեքստի վերլուծական ընթերցանություն կազմակերպելու համար անհրաժեշտ է հաշվի առնել դրա կառուցվածքային և իմաստային բնութագրերը: Այդպիսի մոտեցումը հնարավորություն է ընձեռում նախ և առաջ բնորոշելու ու ընկալելու հեղինակի մտահղացումը, բացահայտել տեքստի բաղադրիչների տրամաբանական և գործառական կապը, ինչպես նաև դրանց դերն ու նշանակությունը տեքստի ընդհանուր մտահղացումը իրականացնելու գործընթացում:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ վերլուծական ընթերցանությունը միտված է տեքստի իմաստային բովանդակության բացահայտմանը: Նախնական փուլում սովորողները վերլուծում են բնագրում առկա քերականական նյութը, բառապաշարը, ոճական երևույթները, մշակութային և այլ փաստերը, իսկ հաջորդ փուլում՝ լեզվաբանական, բովանդակային տեղեկատվությունն ու կառուցվածքային առանձնահատկությունները: Ընդհանուր առմամբ գեղարվեստական բնագրերի ընտրությունը կատարելիս սկզբունքային նշանակություն ունեն հետևյալ սկզբունքները.

- գեղարվեստական բնագիրը պետք է համապատասխանի ընթերցողի հաղորդակցական համապատասխանության մակարդակին, ինչպես նաև հետաքրքրություններին, ճանաչողական և մասնագիտական պահանջներին,
- գեղարվեստական բնագիրը պետք է կատարի կրթական, դաստիարակչական, ընդհանուր զարգացնող և, անտարակույս, գեղագիտական բավականություն պատճառող գործառույթներ,
- այն հնարավորինս ամբողջական, համապարփակ պետք է կարողանա ներկայացնել անգլալեզու երկրներում ապրող մարդկանց կենսակերպը, կենսաոճը տարբեր ժամանակներում, ինչպես նաև նրանց հանրամշակութային և հանրալեզվաբանական բնույթի իրողությունները հասկանալու, ներկայացնելու կարողությունները, ընդհանուր առմամբ՝ հենքային գիտելիքները:

Վերլուծական ընթերցանության կազմակերպման կարևոր սկզբունք է նախաընթերցման փուլի ճիշտ կազմակերպումը: Քննադատական ընթերցանությունը միտված է ակադեմիական հաջողության հասնելուն և սոցիալական ներգրավվածություն ապահովելուն: Այն բաղկացած է երկու առանցքային հմտությունից՝ 1. տարբերակել գլխավոր և երկրորդական գաղափարները, 2. գնահատել տեքստում առկա տեղեկատվության արժանահավատությունը:

Կարելի է պնդել, որ գեղարվեստական բնագրի վերլուծական ընթերցանությունը ներառում է քննադատական ընթերցանության կազմակերպման սկզբունքներն ու ռազմավարությունները: Մի կողմից՝ այն ձևավորում է նրանց վերլուծական-ընթերցանական համապատասխանությունը, մյուս կողմից՝ զարգացնում է նրանց ռեֆլեքսիվ-քննադատական մտածողությունը: Նրանք սովորում են վերլուծություն իրականացնել ձևաբանական, շարահյուսական, իմաստաբանական, գործաբանական մակարդակներում: Ուսանողների լեզվաբանական համապատասխանության կարևոր պայման է տեքստի ոճական հնարների վերլուծության հմտությունների ձևավորումը, որն օգնում է նրանց հնարավորինս ճիշտ հասկանալու ներկայացվող թիրախային տեքստը, բացահայտելու հեղինակի մտահղացումը, առանձնացնելու այն ոճական հնարները, որոնք նպաստում են հոգեբանական առումով լարված մթնոլորտի ստեղծմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Барышников Н. В.** (2003), Методика обучения второму иностранному языку в школе. М.: Просвещение, 159 с.
2. **Воронкова К. Е.** (2004), Работа с аутентичными текстами, содержащими интеркульутрный компонент//Иностранные языки в школе. №7. – С.37-41
3. **Кучеренко Н. Л.** (2009), Особенности обучения чтению публицистических текстов в старших классах общеобразоватльной школы//Иностранные языки в школе. №2. – С. 18-23.

4. **Лесохина А. М.** (2016), Культуроведческий аспект филологического и аналитического чтения при обучении иностранным языкам// Ученые записки. Электронный научный журнал Курского государственного университета. с. 67-78.
5. **Мирошниченко С.А.** (2012), Классификации и использования навыков аналитического чтения поэзии на французском языке // Текущие вопросы языка и методики преподавания иностранных языков: материалы третьей междунар. науч. конф. СПб., т. 1. с. 314–317.
6. **Anderson R. C., Pearson P.D.** (1984), A Schemata-Theoretic View of Basic Processes in Reading Comrehension//Handbook of Reading Research/Ed. By P.D. Pearson. – New York, 52-62.
7. **Block, E.** (1986). The comprehension strategies of second language readers. *TESOL Quarterly, 20*(3), 463-494.
8. **Collie, J. and S. Slater.** (1990), Literature in the Language Classroom: A Resource Book of Ideas and Activities. Cambridge: CUP. there are four main reasons which lead a language teacher to use literature in the classroom.
9. **Duff, A. & Maley, A.** (2007), Literature (Resource Books for Teachers), Oxford University Press.
10. **Malcolm Larking** (2017), Critical Reading Strategies in the Advanced English Classroom//APU Journal of Language Research Vol.2, 60
11. **Maley, A**. (2001), 'Literature in the language classroom' in The Cambridge Guide to Teaching ESOL, Cambridge University Press.
12. **Manarin, K., Carey, M., Rathburn, M., & Ryland, G.** (2015), *Critical reading in higher education: Academic goals and social engagement*. Bloomington, IN: Indiana University Press.
13. **Mikulecky, B. S.** (2008), *Teaching reading in a second language*. Retrieved from http://www.longmanhomeusa.com/content/FINAL-LO%20RES-Mikulecky-Reading%20Monograph%20.pdf.
14. **Sarig, G.** (1987), High-level reading in the first and in the foreign language: Some comparative process data. In J.
15. **Wallace, C.** (2003), *Critical reading in language education*. New York: Palgrave Macmillan.
16. **Walz, J.** (2001), Critical reading and the Internet. *The French Review, 74*(4), 1193-1205.

Aghajanyan N.
Armenian State Pedagogical University

TEACHING ESP TO FUTURE PSYCHOLOGISTS

ABSTRACT

Nowadays the comprehension and a good command of the English language play a huge role in the professional growth of specialists in different spheres of science and technologies. In this respect, teaching ESP at university level becomes of great importance. A skillful combination of teaching methods, technology capabilities incorporated with excerpts from professional literature and fiction help to create an atmosphere that enhances the students' motivation specializing in psychology.

Key words: *comprehension, specific purposes, methods of teaching, technologies, psychology*

РЕЗЮМЕ
ПРЕПОДАВАНИИ ESP БУДУЩИМ ПСИХОЛОГАМ

В настоящее время владение английским языком играет огромную роль в профессиональном росте широкого спектра специалистов. В этом отношении обучение английского языка для профессиональных целей в университетах приобретает большое значение. Искусное сочетание современных методов, технологических возможностей, специальной и художественной литературы помогает создать атмосферу, которая усиливает мотивацию студентов, специализирующихся в психологии.

Ключевые слова*: понимание, конкретные цели, методы обучения, технологии, психология*

ԱՄՓՈՓՈՒՄ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՆԳԼԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՀՈԳԵԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ներկայումս անգլերենի իմացությունը մեծ դեր ունի մասնագիտական աճի մեջ: Այս առումով մասնագիտական նպատակներով անգլերենի դասա-

վանդումը բուհերում առավել մեծ նշանակություն ունի: Ժամանակակից մեթոդների, նոր տեխնոլոգիաների կիրառումը, մասնագիտական և գեղարվեստական գրականության հմուտ օգտագործումը ստեղծում են այնպիսի մթնոլորտ, որոնց նպաստում են հոգեբանության մեջ մասնագիտացող ուսանողների մոտիվացման խթանմանը:

Բանալի բառեր՝ ըմբռնում, կոնկրետ նպատակներ, ուսուցման մեթոդներ, տեխնոլոգիաներ, հոգեբանություն

For the last decades, ESP as a special aspect of language teaching has developed significantly and has taken a leading position in teaching English for professional purposes (Basturkmen, 2008). International integration, the constant flow of new ideas combined with traditional methods of training made ESP as the main trend in teaching professionally oriented language at University level in Armenia. Nowadays it is mandatory to know English no matter what field of knowledge you belong to. It is simply impossible to become a qualified specialist without English, as it has become an integral part of the professional training for all specialists. Here comes forward the important role of ESP teachers who are responsible for the development of special training programs and curricula (Carver, 1983). Today, when new tasks are set in the interpretation of the goals of language education, certain changes have been made in the process of educational interaction between the teacher and the student. The teacher needs to picture more visibly what is required of him at teaching a foreign language. The main tasks of the ESP teacher are the selection and organization of training materials, the development of effective curricula and calendar plans aimed at obtaining the desired results of training. Meanwhile, the teacher should support the motivation of students, their efforts, and diligence. Also, an important element of working in the ESP groups is providing student's feedback to the teacher. The response on behalf of the students is especially valued, so the teacher could control the learning process and if necessary provide help and support to students. There are a large number of new methods and approaches used by ESP teachers depending on the objectives of the courses (Dudley-Evans 1998). When developing a program in a foreign language, one should also take into account the background knowledge and language skills of students, as well as the motivation of students to learn more. The content of lessons should

include theoretical provisions. When the ESP teacher enters the classroom, he, first of all, should eliminate the tension within the audience; it helps to create favorable conditions for learning, a friendly atmosphere of mutual understanding and mutual assistance. The setting of the purpose of the lesson affects to a greater extent the choice of educational and methodological material. If the goal of the lesson is to strengthen communication skills, the teacher should include various exercises that simulate the practice of communication in the language: dialogues, reports, presentations, and discussions. The estimation criterion is the ability of the students to report independently, discuss and find answers to questions that arise in the process of communication in a foreign language. Students acquire stable communication skills only when they have the opportunity to use them in communication with others. To achieve better results the teacher must develop and use effective methods for developing communication skills, as well as attracting other resources of the Internet.

It is very important to have adequate linguistic control if the teacher tries to segment into separate grammatical units text fragments, the lesson might become boring, the language environment becomes distorted and the students might lose motivation for the further use of their knowledge. So, the more the teachers are forced to focus their attention on the purely linguistic, grammatical aspects of the language, which seems difficult to them, the less willing they become to attend classes of English. To intensify students' motivation teachers have to stimulate communication outside the classroom. The students learn a foreign language easily when they are highly motivated and have the opportunity to use their knowledge and skills in a language environment, which they understand and are interested in. To motivate the students ESP teachers often use interactive whiteboards, projectors, videos and movies in the classroom. In this respect, it is very important for ESP teachers to have regular support and guidance on the use of new technologies. Another source of motivation both for the teacher and students is the use of debates during the lessons of English. Even at the stage of preparation for the debate, students have to focus their attention on the key issues and mobilize all their knowledge to demonstrate both linguistic and professional competence. It is noteworthy that the teacher should provide the choice of those materials that students find interesting and relevant, and which they can use in their professional activities or further research. ESP students are mostly predisposed to concentrate on the material closely related to their specialization (Hutchinson, 1987). We would like to present the topics for debates that are of

great importance for the students specializing in psychology: Perception and telepathy; Consciousness versus Unconsciousness; Dreams and Reality; Effectiveness and Rewarding; Sweet Memories and Heartbreaking Moments; Body Language and Emotions; Nature or nurture?

During the debates it advisable to use some authentic video materials in order to familiarize the students with specific ways of using professional language to that they would be able to apply it correctly in the debate.

The problems that are in the sphere of the professional competence of psychologists are raised on the pages of not only special literature but also in fiction. Of particular interest is “Alice in Wonderland” by L. Carroll, one of the world's most loved fairy tales. “Alice in Wonderland” is full of magic: magical cakes and sweets, secret doors, widely smiling Cheshire cats, unimaginable creatures, places, and events. Throughout one and a half centuries of existence, the fairy tale has become a source of inspiration for films, cartoons, computer games, illustrations, and paintings. There are attempts to explain the magic of Wonderland not as a children's fairy tale, but a complex, intricate allegory about sex, politics and drug addiction. Once Charles Dodgson a Professor of Mathematics was telling a story of Alice's adventures to Alice Liddell and her sisters, daughters of the Dean of one of the Oxford colleges. The girls liked the story so much that they persuaded Dodgson to write it down and publish it. Taking the well-known pseudonym Lewis Carroll, Charles Dodgson listened to their advice and published his famous work. Wonderland is full of characters joined and linked together through Alice’s adventures. Scientists claim that dreams consolidate memories, reality and unreality merge, forming a kind of new controversial entity. Psychologically Alice is facing emotional state of isolation. Isolation goes hand in hand with the puberty, with the abandonment of childhood, Alice experiences psychological fear of growth. The incident with the Reindeer in the looking-glass is the best example of it. While walking through the forest Alice discovers the deer, who exclaims, “I’m a Deer, that’s it. And you are a human child!” and runs away. According to the author these are two separate creatures living in isolation. This idea symbolizes Carroll’s own isolation within the Victorian society. His relationship with young Alice Liddell was just a specific type of partnership between the deer and the human child. Almost every character that Alice faces is crazy and lonely. Her dream that leads her through different adventures is almost a stream of consciousness. In the process of exploration, her adventures are always waiting for her. This is the

nature of the logic of sleep. She is the objective observer in this insane and upside-down world, the meaning of which she is trying to comprehend.

Another psychological issue in this novel is the notion of criticism. Criticism is a kind of psychological defense for the human being who likes to criticize; it's a form of ego defense. It can be destructive in relationship; it can cause resentment and frustration. In this novel Humpty-Dumpty is engaged in self-praise, he is very much pleased with himself; he sits on the wall and criticizes others and this is how he justifies himself. Though he considers himself to be the best of all, he can't stay upright, he falls down, and here Carroll ridicules him for his self-praise and high self-esteem.

Madness and lack of logic – this is the thread that connects Alice with the characters of the novel. Madness breeds many things with good and bad results. Alice always welcomes these insane creatures, sometimes she wants to find logic in their deeds but she is never bothered by their insanity. The quote "Everyone in Wonderland is mad, otherwise they wouldn't be down here" said by the Cheshire cat, can be interpreted this way: those who like to dream and escape from reality are mostly mad.

Summing up the topics of psychological relevance in "Alice in Wonderland» are the following ones: game and its rules, reality versus unreality, meaning and lack of meaning, logic and its absence, order and absence of order, visual illusions, dreams and their psychological interpretations. The analysis of the novel in the classroom is very useful because it gives students who are just beginning to get acquainted with psychology, an excellent opportunity to learn how to discuss professional problems in English.

The formation of psychoanalysis as a separate new and very promising method started at the beginning of 20th century. Traditionally, the history of psychoanalysis is associated with the names of Z. Freud and C. Jung. The contribution of these scientists to the development of the method was of fundamental importance. The main idea of this method is the return to consciousness through repressed psychic senses. Since then psychoanalysis has been widely used in literary criticism.

In two novels Franny and Zooey written by J. Salinger the method of psychoanalysis has found its representation. For the students majoring in psychology, these stories can be viewed not only as a model of English prose in the mid-20th century but also as an expression of the author's attitude to this method of solving psychic problems. In order to understand this attitude,

students need to have an idea about the time of creation of these stories about the author's personality and his philosophical background, about the historical and cultural context in which psychoanalysis appeared. But in this novel psychoanalysis gets a frankly doubtful assessment, sounding in Zooey's remarks. Here are some quotes from the novel:

"You just call in some analyst who's experienced in adjusting people to the joys of television, and Life magazine every Wednesday, and European travel, and the H-Bomb, and Presidential elections, and the front page of the Times, and the responsibilities of the Westport and Oyster Bay Parent-Teacher Association, and God knows what else that's gloriously normal – you just do that, and I swear to you, in not more than a year Franny'll either be in a nut ward or she'll be wandering off into some goddam desert with a burning cross in her hands." (Zooey.5.71)

Skeptical approach of Salinger to psychoanalysts can be seen in this passage too.

"For a psychoanalyst to be any good with Franny at all, he'd have to be a pretty peculiar type. I don't know. He'd have to believe that it was through the grace of God that he'd been inspired to study psychoanalysis in the first place. He'd have to believe that it was through the grace of God that he wasn't run over by a goddam truck before he ever got his license to practice. He'd have to believe that it's through the grace of God that he has the native intelligence to be able to help his goddam patients at all. I don't know any good analysts who think along those lines. But that's the only kind of psychoanalyst who might be able to do Franny any good at all. If she got somebody terribly Freudian, or terribly eclectic, or just terribly run-of-the-mill - somebody who didn't even have any crazy, mysterious gratitude for his insight and intelligence - she'd come out of analysis in even worse shape."

This novel is especially interesting for the students majoring in psychology as it is about Franny Glass's spiritual breakdown. It is wonderful to see how brother helps his sister overcome stress and depression. The problem of psychological isolation brought Franny to a nervous breakdown, and as a result, she is unhappy both with herself and others. She hates conformity in which everyone was engaged. But with the help of her brother, she finds refuge in harmony and admits that only love could help all humanity.

Nowadays the ESP training is developing faster and faster, and it is absolutely clear that it is not possible to cover all current trends. To make ESP

education more productive it is necessary to include new technologies. The problems that are in the sphere of the professional competence of psychologists are raised on the pages of not only special literature but also fiction. Therefore, the use of excerpts from fiction in English classes will help to comprehend the problems that have been the subject of professional interest of psychologists.

REFERENCES

1. **Basturkmen H.** (2008), Ideas and Options in English for Specific Purposes, – Taylor and Francis e-library. www.eBookstore.tandf.co.uk
2. **Carver D.** (1983), Some Propositions about ESP / D. Carver // The ESP Journal, – N. 2. – 131-137pp.
3. **Dudley-Evans T.** (1998), Developments in English for Specific Purposes. – Cambridge University Press.
4. **Hutchinson T.** (1987), English for Specific Purposes. – Cambridge University Press.

Beschikjan T.
STAATLICHE UNIVERSITÄT JEREWAN

GRAMMATIK IM FREMDSPRACHENUNTERRICHT

ABSTRACT
GRAMMAR IN THE TEACHING PROCESS OF FOREIGN LANUAGE

The present paper discusses the role and the relevance of grammar in the process of teaching a foreign language in higher educational establishments. The author analyzes new approaches to the given problem, relying on the principles of descriptive and contrastive linguistics. Revealing some features of grammatical analysis of linguistic material, the paper proposes some new principles and approaches to teaching grammatical phenomena in a foreign language.

Key words: *descriptive principle, contrastive linguistics, grammatical analysis, linguistic material, comparative approach, grammatical phenomena, linguistic feature.*

РЕЗЮМЕ
ГРАММАТИКА В УРОКЕ ИНОСТРАННОГО ЯЗЫКА

